



241

n-20

150



Մ Է Տ Ե Վ Ը Դ Ը Ր Ը Ը
Մ Ա Կ Կ Ա Կ Ց



3

Ձ Մ Ե Ռ Ի Ը Ն

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն Ն Ե Ր

5084

ՉՄԵՌՈՒՆՆ


ԻՐԻԿՈՒՆՆԵՐ

ԿԱՄ

ԱՅԼԵՒԱՅԼ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՏՈՐ Բ .



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1859

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ


288

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE




579-2007





Եր 58.

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ



Չ Մ Ն Ռ Ի Ե Ն

ԻՐԻԿՈՒՆՆԵՐ



ՏԻՆԳԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ

Հաւատարիմ գերի :

ՍՈՒՐԲ ԴՈՄԻՆԻԿՈՍԻ կղզին յետ
 Լնդիլեան կղզիներուն մէկն է, աս կըղ
 զիս 1492ին գտաւ Քոլումպոս՝ նաւա
 պետը Մեքսիկոյի նեղուցին բերանը,
 և անունը դրաւ Սպանիոլա կամ պըղ
 տի Սպանիա : Ատքի ատենները մէջը
 քաղաք մը շինեցին սուրբ Դոմինի
 կոսի անունով, անոր համար բոլոր
 կղզին ալ սուրբ Դոմինիկոս ըսեցաւ :

Աս կղզիին երկայնութիւնը հինգ
 հարիւր մղոնէն աւելի է, լայնութիւնն
 ալ հարիւր յիսուն մղոն : Առջի բնա-

կիչները Հայիթի կրսւէին, բայց Սպանիացիք անոնց գրեթէ ամմէնն ալ ջարդեցին : ()գը խիստ տաք ու վնասակար է, բայց բերքը առատ . ամմէն տեսակ ազնիւ պտուղներ բերելէն ետքը, կըբերէ նաև շաքար, որդնուկ (գրըմըզ), բամպակ, ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, անագ, ծծումբ, և ուրիշ տեսակ տեսակ բերքեր :

Արոպայէն ինչ կենդանի և ինչ բոյս որ տարին հոն՝ բոլորն ալ աղէկ առաջ եկան :

Աս կղզիիս բնակիչները 1790 ին վեց հարիւր հազարէն աւելի էին . ասոնցմէ վաթսուն հազարը ճերմակ, հինգ հարիւր հազարը սև գերի, քառասուն հազարն ալ սև ու ճերմակ ծնողաց զաւկրներ : Ամերիկայի մէջ Գաղղիացոց ունեցած էն աղէկ տեղը աս էր, անոր համար Արեւմտեան հնդկաստան ըսւած կղզիներուն գըրախտը կըսեպւէր :

Գաղղիացոց խռովութեան ատենները, իրենց ազգային ընկերութենէն

Հրաման ելաւ որ գերութիւնը վեր-
ցրւի, ամմէն մարդ ազատ ըլլայ : Ան
գերիները աս լսածնուն պէս, մըտ-
ւընին դրին որ ազատութիւննին նախ
իրենց տէրերուն դէմ բանեցընեն .
ուստի միաբանեցան, խօսք դրին, որ
որոշեցին՝ իրենց տէրերը սպաննելու :
Բայց աս չարութիւնը մտածող գերի-
ներուն մէջ ոմանք ալ գտնուեցան որ
մտածելով թէ սլարապ տեղը որչափ
անմեղ արիւն պիտի թափի, սկսան դո-
ղալ ու սոսկալ . մանաւանդ երբոր
կըմամըտային թէ շատերը իրենց բա-
րերարներուն ալ արիւնը պիտի մտնեն :

Ասանկ բարեսիրտ գերիներէն մէ-
կըն ալ հարուստ ու ողորմած խաթու-
նի մը կըծառայէր : Աս ըսած խաթու-
նըս չէ թէ միայն ուրիշ Գաղղիացոց
պէս իր գերիները չէր նեղէր ու չէր
չարչըրկէր, հասպա նաև մեծ դութ կը-
ցուցընէր վրանին . ինչպէս թէ իրեն
եղբայրներն ըլլային՝ անանկ կըսիրէր
զիրենք . « Ամմէնքս մէկ Աստուծոյ ըս-
տեղծուած ենք կըսէր, Աստուած կու-

զէ որ ամմէնքս ալ արքայութիւն երթանք . անոնց համար ալ նոյն շնորհքը պատրաստեր է » : Աւ աս մտածմունքները գործնական կերպով յայտնի կերեցընէր : Շատ անգամ գերիներուն հիւանդ եղած ատենը, կերակուրը և ուրիշ ամմէն պէտք եղած բաները իր ձեռքովը կրտանէր անոնց : Նոր համար գերիներն ալ մօր պէս կը սիրէին զինքը , ու անունը մեծ պատուով ու գովեստով բերաննին կանչէին :

Խել մը ատեն կար որ խաթունը կրտեսնէր իր Մատթէոս անունով հաւատարիմ գերին քաշւած ու տրտում . իր ամմէն օրւան ծառայութիւնները կընէր , բայց պաղ կերպով մը , անանկ որ խաթունին առջևը աչւըներն ալ վեր չէր վերցընէր . ասով յայտնի կիմացընէր թէ ծածուկ բան մը ունի սրտին մէջ : Առջի բերանը կարծեց թէ գուցէ հիւանդութիւն մը ունենայ . սկսաւ ամմէն շարժմունքը դիտել , բայց բան մը չիկրրցաւ իմանալ . մինակ

այսչափ հասկըցաւ որ իր գերիին տրտոյ
մութիւնը օրէ օր աւելնալու վրայ է :

Համարձակեցաւ օր մը առանձին
հարցուց , թէ աս քանի օր է՝ տրտոյ
տու՛մ ես , ի՞նչ ունիս : « Աիմանաս խա
թուն » ըսաւ գերին , ու մէկէն հեռա
ցաւ անկէց : Աս խօսքը խաթունը ա
ւելի մտամտութի մէջ ձգեց . ուստի նո
րէն ստիպեց զինքը որ առանց ծած
կելու զուրցէ , թէ և ցաւալի բան ըլ
լայ : Ան ատենը խեղճ գերին սկսաւ լալ
ու թողութիւն խնդրեց ըսելով՝ թէ
չեմ կրնար զուրցել , վասն զի սոս
կալի երգում ըրեր եմ , ու պահելու
չըլլամ նէ՝ պատիժս մահ է : Ասաթու
նին երեսին գոյնը մէկէն նետեց :

Քիչ մը մտածելէն ետքը դարձաւ
ըսաւ գերին . « Ինձի կերևնայ , թէ
Աւրոսպացուց դէմ խորհուրդ մը կայ
ձեր մէջը . բայց Մատթէոս , նորէն կը
խնդրեմ , իրաւը զուրցէ ինձի՝ որ կա
րենամ իմ զգուշութիւններս ընել :

— Օ՞ւրցածդ իրաւ է , խաթուն .
բայց չըլլայ թէ նշան մը տաս . չէ՞ նէ

դուն ալ կըմեռնիս, ես ալ : Արով
հետեւ հրամանքդ ինքիրմէդ կասկած
առեր ես աս բանիս վրայ, կարճ խօս-
քով կըրնամ ես հասկըցնել հրամա-
նոցդ, որ բոլոր կղզիիս դերիները մէկ-
տեղ խօսք դրեր են որ աս լուսնին լըր-
ման օրը անխնայ մեռցընեն Աւրոպա-
ցիները, ու անոնց բաները թալեն . և
թէ որ մեզմէ մէկը ուրիշի ըսէ աս
բանս, կամ նշան մը տայ, անոր պա-
տիժը մինակ մահն ըլլայ : Բայց հը-
րամանքդ մի վախնար . մենք ամիմէնքս
որ հրամանքիդ ծառայութեան մէջն
ենք՝ խօսք դրինք որ խալըսցընենք
զհրամանքդ . հրամանքիդ համար մեռ-
նիլը մենք աչընիս առեր ենք, ինչւան
որ ասպահով տեղ մը պահենք զքեզ,
որ ետքը կարենաս անկէց Աւրոպա
փախչիլ : Մենք ոչ երբէք յանձ կառ-
նենք մեր բարերարին արիւնը մտնա-
լու » :

Խեղճ կնիկը աս բաներս լսելով քիչ
մնայ որ ինքզինքը կըկորսընցընէր :
Մատթէոս կըրցածին չափ սիրտ տը-

ւաւ իրենս. վերջապէս « Մեր սէրը հը-
րամանոցդ փորձով ցուցնելու հա-
մար, ըսաւ, ահա հրամանոցդ ամմէն
ազնիւ ու սուղ բաները կըտանինք մէկ
ասլահով տեղ մը կըսլահենք. ուստի
որչափ արծաթ ունիս նէ՛ տուր ին-
ծի, տանիմ անանկ տեղ մը սլահեմ,
որ ամենեւին չիկըրնան թշնամիները
դտնել » :

Ողորմելի կիներ սկսաւ մտմըտալ թէ
ինչպէս պիտի թողու իր հարստու-
թիւնը, երկիրները, տունը տեղը, և
թէ ո՞ր դիտէ ինչ նեղութիւններ պիտի
քաշէ. ինչ վախ, ինչ սրտագող պիտի
ուենենայ ան ահադին առանձին անա-
պատներուն մէջ գողերու ու գազան-
ներու ձեռքէն : Ասոնք մտածելէն բո-
լոր արիւնը պաղեցաւ, լեզուն բռնըւե-
ցաւ, պատասխան մը չիկըցաւ տալ : Ա-
ւելի կուզէր հոն մէկէն մեռնիլ, քան
թէ այրի մը մէջ երթալ ահ ու վախով
հալիլ մաշիլ : Նայց գերիին տըւած
խրատն ալ մտիկ չընելու՝ սիրտը առաջ
չէր երթար. մանաւանդ որ աղէկ կը-

Ճանչնար իր գերիններուն հաւատարմութիւնն ու սէրը :

Արքոր քիչ մը սիրտ առաւ նէ, զընաց լալով խաչելութեան ոտքն ընկաւ, սկսաւ ասանկ աղօթք մը ընել. « Աստուած իմ, քու արարածներուդ կենացը ու մահուան տէրը դուն ես. տէր իմ, դուն մինակ կրնաս զիրենք ինչևան անդունդը ձգել ու նորէն խալըսել. դուն գիտես քու աղախինիդ սրբտին տաղնապը, դուն օգնէ ինծի, ու թէ որքու կամքդ է՝ խալըսէ զիս. թէ որ կուզես որ ելամ աս աշխրորէս, անդին դոնէ ողորմէ՛ ինծի : Աստուած իմ, քու կամքդ իմինս է. ինչպէս որ կուզես՝ անանկ ըլլայ » :

Աղօթքը լմնցրնելէն ետքը սիրտ առաւ, ոտք ելաւ, շատ բաներ հարցուց իմացաւ Մատթէոսէն. ետքը որչափ արծաթեղէն որ ունէր, ժողովեց առաւ լաթի մը մէջ պլլեց՝ ձեռքը տրւաւ :

Ան հաւատարիմ ծառան պազաւ իր խաթունին ձեռքը, առաւ կապոցը,

ծածուկ տեղ մը պահեց , որ գիշերը
անկէց ալ առնէ անտառը տանի : Ասանկ
քանի մը գիշեր երթալով զալով
իր խաթունին ամմէն սուղ բաները
փախցուց : Տէպէտ ինչևան ան ատե
նը աս բաները մարդու չէր իմացու
ցած , բայց հարկաւոր սեպեց որ իր
խաթունին ուրիշ մէկ քանի գերիններուն
ալ իմացընէ : Ասոնք լսածնուն պէս գո
վեցին իրեն խելքը , ու իրենք ալ սոթ
տըւեցան որ հարկաւոր բաները տա
նին կրեն անտառը , որպէս զի խա
թունը ամենևին նեղութիւն մը չկա
չէ անապատին մէջը : Աոյն գիշերը
ան գերիներէն ինը հողի եկան , իրենց
խաթունին մնացած բաները , և մէկ քա
նի ամսըւան կերակուր ալ առին ան
տառը տարին :

Վերջապէս եկաւ հասաւ ան սոս
կալի օրը , բայց գերիները ամենևին
դրսըւանց բան չէին իմացընէր : Առա
ւօտանց կանուխ եկաւ Մատթէոսը ,
իր խաթունին ըսաւ թէ փախչելու ա
տենն է : Այլ ամմէն կողմանէ բանը ա

սլահոյլ լմընցընելու համար՝ յարդէ
կապոց մը շինեց, իր խաթունին լա-
թերը անոր հագցուց, գլուխը հին դի-
շերնոցներէն մէկը դրաւ, ու պառկե-
ցուց անկողնի մը մէջ: Ասաթունին
դերիները խօսք տըւեր էին մէկալ-
ներուն, որ ան սենեակը վազեն՝ ի-
րենց խաթունը մեռցընեն:

Արբոր ամմէն բան սլատրաստ էր,
խաթունը ցաւագին կերպով մը դար-
ձաւ նայեցաւ նորէն աչւըները լեցւած
իր երկիրներուն վրայ, ու ելաւ գնաց:
Չանաց դրսըւանց ամենեին տրտ-
մութեան նշան մը չիցուցընել. շիտակ
ելաւ գնաց իր շաքարի եղէգներուն
երկիրը, ուր քառասուն դերի կեցեր
կաշխատէին: Առջինին պէս սկսաւ
ուրախութեամբ գովել զիրենք, քաջա-
լերել, ու խոստացաւ որ աղէկ բարի
ձեռք տայ: Անկէ ելաւ գնաց դէպ
'ի անտառը. բայց կասկած չիտալու
համար՝ առաջ անտառին բերանը նըս-
տաւ որ հանդի. հոն կերաւ կէսօր-
ւան կերակուրն ալ, ինչւան որ սկսաւ

մթըննալ : Ան ատենը ելաւ Մատթէոսին հետ մէկտեղ անտառին մէջ դէպ ՚ի ներսերը զարկաւ , ու սկսան փախչիլ : Խել մը ատեն սաստիկ նեղութեամբ ասանկ քալելէն ետքը , երբոր զիշերւան մութը աղէկ մը կոխեց , Մատթէոս դարձաւ՝ հոս քիչ մը յոգնութիւն առնենք ըսաւ : Ան միջոցին շուտ մը ելաւ ծառի մը վրայ , ու նորէն վարինջաւ . « Ամէն բան լըմնցեր է ըսաւ դողդըղալով . իմ կատաղի քաղաքացիներս ուղածնին կրնեն կոր . բոլոր քաղաքը կրակ կտրեր է . անտարակոյս հրամանոցդ տունն ալ բըռնկած է . աղէկ որ հրամանքիդ կեանքը ապահով է : Հրամանոցդ փախչիլը՝ միայն մէկ քանի հաւատարիմ գերիներդ զիտեն , որոնք աւելի յանձ կառնեն մեռնիլ՝ քան թէ զհրամանքնիդ մատնել :

— Ո՛վ Մատթէոս , ըսաւ կինը , քանի կերթամ աւելի կիմանամ կորքու բարեսրտութիւնդ ու հաւատարմութիւնդ . աս զիս խալըսելդ ու իմ

բաներս փախցընելդ մէկ բարիք մըն է որ ես յաւիտեան պիտի չիմոռնամ : Ի՞նչ փոխարէն կըրնամ ես ընել այս չափ բարերարութեան որ դուն ինծի կըրցուցընես : Ասկէ ետքը դուն իմ գերիս չես , իմ բարերարս ու բարեկամս ես : Ազատ ես ասկէց ետքը . բայց թէ որ կուզես նէ մէկտեղ երթանք Աւրոպա . հոն երբոր ես իմ ազգականներուս տունը հասնիմ նէ , ձեռքէս եկած բարիքը կընեմ քեզի , և մեռնելէս ետքը բոլոր ունեցածս քուկինդ ըլլայ :

— Խաթուն , աս խօսքերդ մեծ ցաւ են իմ սրտիս . աս գիտցիր որ ես քեզի հետ կուզամ ուր որ երթալու ըլլաս . ամենևին ես իմ շահուս համար չեմ ընել աս բանս , հասպա միայն իմ սէրս՝ իմ երախտագիտութիւնս քեզի ցըրցունելու համար :


«Միտքերնիդ բերէք թէ իմին վերջի անդամ հիւանդացած ատենս , ի՞նչ պէս հոգացիք զիս . ան բաները ոչ երբէք ես պիտի մոռնամ . հրամանքդ չըլլայիր նէ՝ ես հիմա մեռած էի .

ամմէնքը զիս երեսի վրայ թողուցեր
 դացեր էին . միայն հրամանքդ զիս
 չիթողուցիր . զիշեր ցորեկ քովէս չի
 հեռացար , ու երբոր քիչ մը աղէկնալ
 սկսայ , նայեցար որ ուժս ազնիւ փա
 փուկ կերակուրներով տեղը բերես .
 ուրեմն ի՞նչ է անոնց զիմացը հիմակ
 ւան խմին ըրածս » :

Մատթէոս դեռ խօսքը չիւմընցու
 ցած՝ մէյմնալ յանկարծ սոսկալի ոտ
 քի ձայն մը լըսեցաւ նոյն անտառին
 բերանը : Խեղճ կիներ ինչ ընելէքը չէր
 զիտէր . իսկ կտրիճ ծառան վազեց ե
 լաւ ծառի մը վրայ , որ նայի թէ ի՞նչ
 ձայն է : Տեսաւ որ խել մը մարդիկ ձեռ
 ւընին վառած ջահերով դէպ ՚ի իրենց
 անտառը կը վազեն՝ զազանի պէս կանչ
 ւըռտելով :


Հուտով ինչաւ ծառէն , բռնեց խա
 թունին ձեռքէն , « փախչինք , փախ
 չինք ըսաւ , դեռ աղէկ մը չենք հեռա
 ցած . ձեռք ինալու վախ չունիմ .
 բայց որչափ կրնանք նէ հեռու փախ
 չինք ասոնց կատաղութենէն » : Ա՛ս Ը

4022-676



սելով սկսան շիտակ հիւսիսէն դէպ
'ի հարաւ երթալ : Մէկ ժամի մը չափ
քալելէն ետքը կեցան , խաթունը ծա-
ռի մը տակ նստաւ , ծառան ալ ելաւ
նայեցաւ որ ձայն ձուն չիկայ , ամմէն-
քը իրենց տեղը քաշւեր են , բայց կը-
րակը դեռ չէր մարած : Ան դիշերը քա-
նի գեղեր այրեցան մոխիր դարձան ,
երկինքը կաս կարմիր կտրեր էր , կղզին
ալ կարծես թէ կրակէ ծով մըն էր :
Մատթէոս վար ինչաւ ծառէն , « Ալ
վախ չիկայ ըսաւ , ամմէնքը տըները
թալլելու ետեւ են , մենք առաւօտը կը
հասնինք ան տեղն որ հրամանոցդ
բաները պահեր եմ , կըյուսամ թէ եր-
կու օր շահցնիր , դրսէն ալ լուր մը
կառնենք » :

Խաթունը սաստիկ յոգներ էր , ու
կէսօրւընէն ետքը բերանը բան չէր
դրած . և սակայն սիրտ ըրաւ , ոտք ե-
լաւ , սկսան նորէն առաջ երթալ : Ա-
րևը երեցաւ լեռներուն մէջէն , ան-
տառին թանձր ծառերուն ծայրերը
կամաց կամաց սկսան սկեզոյն ձա-



ուսման թիւերէն փառքը լի : Աս մէկ ան-
տառ մըն էր որ մարդու ոտք դեռ չէր
կոխած հոն . ահագին ծառերը շորս
դին բռներ էին , և անոնց ճիւղերը
լայն լայն տերեւներով ինչւան գետի-
նը կը հասնէին : Չորս դին լեռներ ,
ձորեր , բլուրներ . ծառերուն վրայ հա-
զարաւոր գոյնզգոյն մեծ ու սլաքիկ
թռչուններ , թութակներ , սոխակներ
իրենց զանազան անուշ ձայներովը ան-
տեղին լուծիւնն ու առանձնութիւ-
նը մոռցրնել կուտային :

Վերջապէս խալըսեցան ան աշխա-
տալի ճամբորդութենէն , ու հասան տե-
ղերնին , որ էր ժայռերուն մէջ բա-
ցրւած ընդարձակ այր մը : Մատթէոս
ամմէն բան անանկ կարգի դրեր էր որ
խաթունը ինչւան անկողինն ալ գտաւ .
պատրաստ . կտոր մը բան բերանը առ-
նելէն ետքը՝ ընկաւ անկողինը , անուշ
քուն եղաւ :

Բոլոր սրբոյն Գովինիկոսի կղզին
տակն ու վրայ եղեր էր . բարեկարգու-
թեան տեղը՝ գազանային կատաղու-

Թիւնը տիրեր էր , արդարութեան տեղը՝ անգթութիւնը , հնազանդութեան տեղը՝ ասպտամբութիւնը : Ան կղզին որ առջի իրիկունը հանդիստ ու խաղաղ էր , երկրորդ առաւօտը անթիւ մեռելներու գերեզմաննոց դարձեր էր :

Խաթունն ու իր հաւատարիմ ծառան օրերով առանց լուր մը առնելու մնացին հոն : Մէյմըն ալ չորրորդ իրիկունը հաւատարիմ գերիներէն մէկը եկաւ ու տեղն 'ի տեղը պատմեց ամէն ըրած անգթութիւնին , որ ոչ մարդու խնայեր են և ոչ անասունի , ոչ տղան նայեր են ոչ ծերը , ամմէնն ալ սպաններ են : « Մէկն ալ ես էի ըսաւ , որ քսան հոգի հետս առած վաղեցի ճղքեցի բազմութիւր , մտայ հրամանքիդ տունը , ու անկողինիդ մէջ պառկած խոտէ մարդը զարկի . ան անատենը մէկաչներն ալ տունդ թալլեցին , ու ետքը կրակ տրւին » : Աս ալ ըսաւ թէ ան դազանները գինովի պէս ամենեւին չիփրնատեցին թէ Վատթէոսը ուր է . առջի բերանը կարծեցին թէ բանի

մը հետ է , ետքը ձայն ելաւ թէ մե-
ռեր է » :

Խաթունը շատ բան հարցուց ի-
մացաւ ան դերիէն . անիկայ ալ ամ-
մէն բանին սլատասխանը տալէն ետ-
քը ըսաւ՝ թէ ամենեւին չիվախնայ ,
վասն զի տեղերնին խիստ ապահով է :
Արթալու ատենը խօսք տըւաւ որ շա-
բաթը անգամ մը անպակաս գայ զի-
րենք տեսնելու :

Մատթէոս իր խաթունը հոգալէն
ամենեւին չիսրակսեցաւ : Այրին մէկ
անկիւնը միշտ կրակ կը պահէր , շատ
անգամ որսի կերթար , ու երբեմն ալ
թռչունի բոյներ կը բերէր իրեն , եր-
բեմն հաւկիթներ , երբեմն ալ ուրիշ
վայրի կենդանիներ : Այրէն քիչ մը
հեռու գետնէն պզտիկ աղբիւր մըն
ալ կը բըխէր ու առուակ մը եղած
կը վազէր , ան ջուրը խմելու ու լըւաց-
ւելու կը գործածէին : Ասանկով ամիս-
ներ անցան , և խաթունը թէպէտ մի-
նակ էր ան առանձնութեանը մէջ ,
բայց կեանքը ապահով էր , և ապ-

ըուստի հարկաւոր բաները բոլոր ունէր. միայն քանի որ կրմտածէր թէ ասոր վերջը ուր պիտի երթայ, տարակոյսը զինքը կառնէր: Տարիներ կրնային անցնիլ ինչւան որ նաւ մը դարհոն . վասն զի ան խռովութենէն ետքը վաճառականները վախերնէն առուտուրի չէին իզար ան կղզին:

Օր մը այրին բերանը աս բաներս մտածելով տրտում նստեր կողով կըհիւսէր . մէյմըն ալ ձայն մը առաւ որ կարծես թէ ծառերուն մէջէն մարդ մը կուգայ՝ ճիւղերը բաժնելով ու ճամբայ բանալով: Կնքը ներս քաշւեցաւ ու նշան տըլաւ Սատթէոսին որ մօտիկնայ, ու առանց երևնալու նայի թէ եկողն ո՞վ է: Օրտան մէկէն ճանչցաւ թէ իր ընկերներուն մէկն է: Ահաւ մարդը, խաթունին ոտքը ընկաւ, ու անոր խեղճ վիճակին ցաւակցութիւն ցուցնելէն ետքը զուրցեց թէ սպանիացի նաւ մը տեսանք որ Արագիլէն կուգայ կոր, և հոս մօտ նաւաւհանգիստ մը պիտի մտնայ . մեր ըն-

կերներէն քանի մը հողի ծածուկ պիտի երթան խօսին նաւապետին հետ որ հրամանքդ ու ծառագիր նաւը առնէ . բայց առաջ կուզենք հրամանքիդ կամքն ալ իմանալ :

Մատթունը շատ գովեց իրենց ջանքը , ու ըսաւ . թէ որ կարելի ըլլար՝ հիմա մէկէն ճամբայ կելլէի : Օրդ գերին մէկէն ոտք ելաւ , առաւ իր նիւզակն ու գնաց : Արկրորդ օրը նոյն ատենը նորէն եկաւ , հետն ալ ուրիշ հինգ հողի , ամմէն բան պատրաստ է ըսաւ , ուստի պէտք է որ աս գիշեր ճամբայ ելանք . ծովեզերքը նաւակ մը պիտի գայ որ բաներդ անոր մէջը գնենք : Աւշանալու ատեն չիկար . ուստի ան միջոցին որ քիչ մը ուտելու բան պատրաստելու հետ էր , ան վեց կտրիճները բաները ժողվեցին կապկրպեցին : Մատթունը խել մը բան զատեց որ իրենց ընծայ տայ՝ ըրած երախտիքներնուն փոխարէն . բայց բարի ծառաները ամենևին յանձ չաօին , ըսելով թէ մեզի ամմէն ընծայէն մեծ

փոխարէն ան է որ մեր բարերար խա-
թունին կեանքը խալըսենք: Հաս խըն-
դրեց որ առնեն , բայց ճար չեղաւ :
Աերջապէս երթալու ատենը եկաւ .
ուժը հոգի ելան ճամբայ՝ սկսան
գէսլ 'ի ծովեզերքը երթալ: Աշնանայ-
ին գեղեցիկ գիշեր մըն էր . բոլոր
երկնքի աստղերը մարդըրտի պէս կը
փալփրէին . ատեն ատեն ալ բարակ
հով մը կը փրչէր , ու կարծես թէ իր ա-
նուշ զովուժեամբը վերջի բարևը կու-
տար ճամբորդներուն :

Բաները նաւակը դրին . իսկ խա-
թունը նաւակը մտնելէն առաջ ըն-
կաւ գետին , լալով շնորհակալ եղաւ
Աստուծոյ որ զինքը անբաւ զթու-
թեամբը խալսեց ան հազարաւոր մար-
դիկներուն մէջէն որ մեռան : Յանձ-
նեց ինքզինքը և Վատթէոսը Աստու-
ծոյ . ոտք ելաւ , թողուժիւն խնդրեց
ան գերիներէն որ վրանին փուճ տե-
ղը կասկածեր էր , ու մտաւ նաւակը .
գերիներն ալ մէկ բերան բարի ճանա-
պարհ կանչեցին իրենց բարերարին :

Յիսուսն օրէն հասան Վիսպոնա ամ
մէն յաջողութեամբ : Մատթէոսը ոչ
երբէք թողուց իր խաթունը , ու մէկ
տեղ երջանկութեամբ անցուցին իրենց
օրերը :



ՎՆՅՆԲՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ

Խոստովանանք :

ԱՍԿԷ առջի շաբաթը Մարկեղոսին գեղը մէկ ցաւալի դիպուած մը հանդիպեցաւ , որ շատ կսկիծ ու գայթակղութիւն տրւաւ ամմէնուն :

Արիտասարդին մէկը վեր 'ի վերանցքիչ մը ուսմունք սորվելէն ետքը՝ հիւանդացաւ , անկողին ընկաւ . և թէ և բանը ծանր էր , բայց ինքը ամենևին չէր ուզէր մեռնելու սրատրաստութիւն տեսնել՝ խոստովանիլ ու հաղորդել : Եր ծնողքը բարեպաշտ ու աստուածաւախ գեղացիներ էին , շատ աղաչեցին որ խօսք մտիկ ընէ ու դարձի գայ , բայց անօգուտ . վասն զի ան ողորմելին միտքը դրեր էր որ ոչ երբէք խոստովանանք ըլլայ . ինչու որ չէր հատար թէ խոստովանահայրները ամմէն

իրենց լսած մեղքերը ծածուկ պահեն:

Բարի աւագերէցը շատ անդամ գընաց խօսեցաւ ան անզեղջ երիտասարդին հետ որ կարենայ միտքը փոխել. բայց անիկայ իրեն մէկ քանի անկարգ ընկերներուն խօսքին նայելով՝ իր անզղջութեանը մէջ մնաց ու չարաչար հոգին փչեց:

Աւագերէցը գիտէր որ իր ժողովուրդին միտքը կրնայ աս բանէս պրդատորած ըլլալ, անոր համար կիրակի օրը աղէկ քարոզ մը խօսեցաւ աս նիւթիս վրայ, ու ասանկով ան չար օրինակին ուժը կոտրեց:

Ասով ալ գոհ չըլլալով, երբոր պարոն Մարկեղոսին տղաքը իր տունը եկան՝ աս պատմութիս պատմեց, որ եկեղեցական պատմութիներէն առած է:

ՊՈՂՆՄԻՅՅԻ Վ ինչեսլաւ թաղաւորին թաղուհին շատ խելացի ու բարեպաշտ կին մըն էր: Ասիկայ իրեն խոստովանահայր ընտրեց Յովհաննէս աւունով սուրբ քահանան, որ Նեփո-

մուչ քաղաքը ծնած էր , ու Փրակայի
մայր եկեղեցիին կանոնիկոսներէն մէկն
էր : Աս մեծ դժուար պաշտօնը որ չու
ղելով վրան առեր էր , հպարտութեան
տեղը աւելի խոնարհութեան պատ
ճառ եղաւ իրեն . վասն զի ինքը աս
տուածային նախանձաւորութեանը
հետ սքանչելի խոհեմութիւն ալ ու
նէր : Հաւատոյ ճշմարտութիւնները
խօսքով քարոզելէն աւելի՝ իր սուրբ
վարքովը կը հաստատէր : Ար գիտու
թիւնն ու իմաստութիւնը ամմէնուն
պատկառելի ըրեր էր զինքը : Յօլոր
քաղաքը իր խօսքէն դուրս չէր ելար .
աղքատներուն բարերարն էր , ցաւա
դարներուն հայրն էր , որբերուն ու
այրիներուն պաշտպանն էր : Աղու
թեան թշնամի , հարուստներուն խոր
հրրդական , առաքինութեան ջատա
գով : Անբաւ զբաղանք ունէր , բայց
իր ամմէն օրւան մտածականէն ոչ եր
բէք կըսլակսէր . զրեթէ բոլոր իր ժա
մանակը հիւանդներ հոգալու , խոս
տովանանք լսելու կանցրնէր , ու ամե

նեին մէկ պարտքէն ալ չէր պակսէր :

Թագաւորին առջևը քարոզ տըւած ատենը անանկ ազատ՝ անանկ համարձակ կրխօսէր ամմէն բան, որ կարծես թէ սուրբ Յովհաննէս Մկրտիչն էր Հերովդէսին դիմացը ելած . իրացրնէ ալ իր անուանակցին առաքինու թիւններըն ունէր : Բանը աս է որ իր վախճանն ալ անոր վախճանին նման պիտի ըլլայ եղեր :

Թագուհին ամմէն բան իր խոհեմ ու առաքինի խոստովանահօրը խօսքովը կրնէր : Իսկ թագաւորը անոր ներհակ՝ նախանձոտ ու կասկածոտ մարդ մը ըլլալով, իր բարեպաշտ ընկերոջը առաքինութիւնը փորձել կուզէր, և անոր անկեղծ հաւատարմութեանը դէմ անհաւատ բռնաւորի մը պէս կրվարէր հետը, քան թէ քրիստոնեայ թագաւորի մը պէս : Բայց Յովհաննէս քահանային վրան ալ մեծ համարմունք ունէր, ուստի մեծամեծ պատիւներ ու պարգևներ կուտար անոր, բայց անիկայ միշտ ծանրէն կը քաշէր

առնելու : Աս բաներս լսելով բոլոր քաղաքը կրդարմանային ան քահանային առաքինութեանը վրայ, ու օրէ օր աւելի սէր կրկապէին վրան :

Թագաւորին անհամուժիւնը քանի գնաց սաստկացաւ թագուհին դէմ, ինչւան սպառնալիքներ ալ սկսաւ ընել : Խեղճ թագուհին թագաւորին բարկութիւնը անցընելու համար ինչ ընելիքը չէր գիտէր, իր խոստովանահօրը խօսքին նայելով, կը ջանար ամէն կերպով իր կողմանէ ամենեին անոր բարկութեան կամ կասկածանքի առիթ մը չիտալու : Բայց իր բոլոր ջանքը սպարապ ելաւ, կարծես թէ իր առաքինութիւնները թագաւորին սրտին մէյմէկ փուշ կը լլային, ուստի համբերելէն 'ի զատ ուրիշ ճար չի գրտաւ :

Օր մը երբոր թագուհին խոստովանանքէն կրդառնար, թագաւորը կատաղութեամբ վրան բրդաւ, չեխեց յանդիմանեց ու առջևէն վազնտեց :

Ատքը մէկէն կանչել տրւաւ խոստովանահայրը ըսաւ, « Առգեմ հի-

մա հոս մէկէն զուրցես ինծի իմ թա-
գուհիիս խոստովանած մեղքերը » :
Պատասխան տրւաւ Աստուծոյ ծա-
ռան հանդարտ սրտով, թէ ատ ըսածդ
ըլլալու բան չէ . խոստովանութեան
խորհուրդը ոչ երբէք կըրնայ յայտնը-
ւիլ, և խոստովանանքի մէջ լըսւած բա-
ները անանկ են՝ ինչպէս թէ ամենև-
ին լըսած չըլլայի :

« Ինծմէ վախնալու բան մը չունիս,
ըսաւ թագաւորը . ես քեզմէ լսածս ու-
րիշի ամենևին չեմ զուրցեր, ուստի ըսէ
համարձակ, մի վախնար, բան չիկայ :

— Գիտնաս որ ես աս բանիս մէջ
քու կամքդ ընեմ նէ, Աստուծոյ հրա-
մանին դէմ ըրած կըլլամ, որ իմ խըղճ-
մըտանքիս ամենևին ձեռք չիտար :

— Այ, սիրտս մի նեղացըներ . ինչ
կարծես թէ իմ խօսքս մտիկ ընես նէ՝
փոխարէնը չես առներ . զուրցէ՛, ինչ
բարիք կուզես որ ընեմ քեզի, ըսէ . ես
պատրաստ կեցեր եմ ամմէն խնդրը-
ւածքդ մէկէն կատարելու . մինակ
կօգատէ որ իմ կնկանս խոստովանած

մեղքերը զուրցես ինձի :

— Հատ կրցաւիմ, թագաւոր, զիս
ատանկ բռնադատելուդ համար. ուս-
տի կրխնդրեմոր պարապ տեղը չիյող-
նիս կամքդ կատարել տալու. վասն
զի ինչւան ետքի շունչս մտիկ պիտի
չընեմ ըսածդ : Թէ որ մէկ ուրիշ բա-
նով մը կրրնամ ծառայութիւն մը ը-
նել հրամանոցդ կամ հպատակներուդ՝
պատրաստ եմ բոլոր սրտանց հնա-
զանդելու. միայն թէ խղճմտանքս ան-
արատ մնայ :

— Ասանկ ուրեմն զիս բանի տեղ
չես սեպեր հա՛. անանկ է նէ նայէ թէ
անուշութեամբ ընել չիտրւածս՝ ինչ
պէս բռնութեամբ պիտի ընել տամ
քեզի : Այդչափ պնդազլուխ կենալուդ
տես թէ ինչպէս պիտի ցաւիս՝ երբոր
տանջանքներու մէջ մանաս : Աէտք ըւ-
լայ նէ մահն ալ պատրաստ է քու ան-
հնազանդութեանդ պատիժ :

— Աս պատրաստ եմ ամէն բան
քաշելու, միայն թէ ինձի զուրցըլած
ծածուկ բաները չկայտնեմ : Գիտնաս

որ ոչ քու ինծի սպառնացած մահդ
և ոչ տանջանքներդ մէկ խօսք մը կըր-
նան ինծի զուրցընել տալ ընկերոջդ
խոստովանանքէն :

— Տաւական է ինծի այսչափ նա-
խատինք ընելուդ՝ ալ չեմ դիմանար »
ըսաւ թագաւորը բարկութեամբ , ու
հրաման տրլաւ որ բանտ տանին ան
սուրբ խոստովանահայրը : Աէկէն
զինւորները Յովհաննէսին վրան վա-
զեցին , տարին մութ բանտ մը դրին :

Թագաւորին աս ըրած անդգամու-
թիւնը քաղաքացիք երբոր իմացան ,
ամմէնքն ալ թագաւորին դէմ ոտք ե-
լան , ու դիտնալով քահանային առա-
քինութիւնն ու բարեպաշտութիւնը ,
և իմանալով թէ իր պարտքին մէջ հա-
ւատարիմ գտւելուն համար թագա-
ւորին աս բարկութեանը հանդիպեր
է , սկսան կանչվըռտել , սպառնալ , ը-
սելով թէ կերթանք բանտը կրկոխենք,
անմեղ քահանան կըխալըսենք : Թագա-
ւորը աս բանս լսելով վախցաւ , սուր-
բը բանտէն հանեց , բայց իր չար

հետաքրքրութենէն ետ չիկեցաւ: Յովհաննէս որ բանտին մէջը քաշած նեղութիւններէն ամենեւին չէր վախցած, նորէն իր առջի պաշտօնը ձեռք առաւ, ու սկսաւ խեղճ մարդիկներուն օգնութիւն հասնիլ: Տայց կարծես թէ մարդարէութեամբ իմացաւ թէ գլխուն գալիք կայ, կամ թէ ինչպէս իր պատմութիւնը գրողները կըսեն, Աստուծ մէ ըլլալիքը յայտնուեցաւ իրեն, ուստի իր ամմէն բաներուն կարգ դրաւ, ու սկսաւ մեռնելու պատրաստութիւն տեսնել: Թագուհին իր կողմանէ ամմէն հնարք ու ջանք բանեցուց, որ իր էրկանը սիրտը կակըղցընէ: Անկէց'ի զատ սկսաւ սլաք ու ծով պահել, տեսակ տեսակ ճգնութիւններ ընել որ թագաւորին միտքը փոխւի, բայց ինչ շահ, վասն զի անոր բարկութիւնը քանի գնաց աւելցաւ, ու անանկ կուրցաւ միտքը որ ամենեւին չէր ուզէր բանի մը մտիկ ընել: Միտքը հաստատ դրեր էր, թէ սուրբ քահանան իրեն նախատինք ըրաւ, անոր համար

պէտք է զինքը մեռցընել : Աս չա-
րութիւնը կատարելէն առաջ՝ ծածուկ
մարդիկ խրկեց որ համոզեն զինքը .
բայց սուրբը միշտ ամուր կեցաւ իր
խօսքին վրայ , ըսելով՝ թէ եկեղեցին
ու մեր հաւատքը ինծի հրաման չի-
տար որ խոստովանանքի մէջ լսած բա-
ներըս ուրիշի ըսեմ : Ամէն խոստովանե-
պարզե մերժեց նորէն . և կտրիճ կեր-
պով կըսէր , թէ պատրաստ եմ ամէն
նեղութիւն ու տանջանք քաշելու :

Աս միջոցիս Յովհաննէսը ուխտի
գնաց Պոլեսլաւ քաղաքը , ուր հին ա-
տենէն 'ի վեր Աստուածածնայ հրա-
շագործ պատկերքը կար : Հոն սուրբ
Աստուածածնայ ոտքը ընկաւ՝ աղա-
չեց բոլոր սրտանց որ օգնէ իրեն
ան նեղ ատենը . ու նորէն սիրտ առ-
նելով խոստացաւ Աստուծոյ որ ինչ-
ւան ետքը հաւատարիմ մնայ իր պարտ-
քին մէջ : Ատքը դարձաւ Փրակա , ճամ-
բան անդադար աղօթք ընելով : Պէտք
եղաւ որ դալու ատենը թագաւորին
պալատին դիմացէն անցնի . թագաւորը

պատուհանէն տեսաւ զինքը , ու իրեն
կանչեց . Յովհաննէս համարձակ զը
նաց քովը . ու երբոր թագաւորը սկսաւ
բարկանալ , սուրբը իր սիրտը հան-
դիստ ու հանդարտ բռնեց , ու ամե-
նեին պատասխան չիտրուաւ անոր խօս-
քերուն : Ան ատենը թագաւորը աւե-
լի կատղելով , հրամեց որ տանին մուծ
ու խաւար տեղ մը զոցեն զինքը ինչ-
ւան իրիկուն : Գիշերուան մուծը կոխե-
լուն պէս հանեցին սուրբը՝ տարին
Սողտաւա գետին քովը : Հոն թա-
գաւորը նորէն հարցնել տրուաւ , կը
զուրցէ թէ չէ : Արբոր Սուրբը նո-
րէն առջի ըսածը զուրցեց , մէկէն
ձեռքը ոտքը կապեցին ու գետը նե-
տեցին :

Թագաւորը աս ըրած չարիքը ծած-
կելու համար , խել մը ստակ տրուա-
ւան դահլիճներուն որ մարդու չիմացը-
նեն . բայց Աստուած իրեն ծառային
վրայ իր խնամքը ցրցուց , որ երկրորդ
օրը ձկնորսները գտան մարմինն ու ա-
ռին եկեղեցի մը տարին :

Աս ըստանութեան ձայնը մէկէն բոլոր քաղաքը տարածեցաւ . ամմէնքը սկսան լալ ողբալ, ըսելով թէ ի՞նչպէս կորսընցուցինք մեր հայրը, մեր սիրելի բարեկամը, մեր բարերարը : Մայր եկեղեցիին կանոնիկոսները թաղաւորին բարկանալէն ամենևին չիվախցան, փառաւոր թաղում ըրին իրենց ընկերոջը, և ան եկեղեցիին մէջ թաղեցին զինքը, ուր որ իրեն հրաշալի քարոզութիւնովը այնչափ մարդիկ դարձի բերեր էր :

Մէկէն սկսաւ գերեզմանէն հրաշքներ ըլլալ . և իմացեցաւ որ Աստուած իր ծառան արքայութեան մէջ սուրբերուն փառքին հասուցեր է : Աս սուրբիս մարտիրոս եղած օրն էր մայիսի 16ին : Անկէց ետքը քանի որ բարեպաշտներուն ջերմեռանդութիւնը աւելցաւ, հրաշքներն ալ շատցան, ու բոլոր Պոհեմիայի բնակիչները մասնաւոր կերպով խոստովանանքի պաշտպան բռնեցին զինքը : Արան իրեք հարիւր տարիի չափ անցնելէն ետքը, Պո

հեմիային եպիսկոպոսները աղաչեցին սրբազան պապին որ հանդիսով տօնեն աս երանելի նահատակը :

Բացին իրեն գերեզմանը 1719ին ապրիլի 14 ին . տեսան որ միսը հալեր էր . բայց լեզուն անանկ ամբողջ ու անապական մնացեր էր , որ կարծես թէ նոր մեռած էր սուրբ քահանան : Հիմա աս լեզուն փառաւոր ամանի մը մէջ դրած՝ Փրակայի մայր եկեղեցին կրպահւի մեծ պատուով : Բենեդիկտոս Ժ՛Գ սրբազան պապը աղէկ մը քննելէն ետքը՝ հրաման հանեց որ աս սուրբը տօնուի :

Ահա այսպէս Աստուած թող տրուաւ որ սուրբ քահանայ մը իր արիւնը թափէ խոստովանանքին գաղտնիքը չիայտնելուն համար . որ անով վերնայ մէջտեղէն շատ մարդիկներուն ան սուտ կարծիքը , որ կըսեն թէ քահանաները ծածուկ չեն պահեր խոստովանութեան բաները : Այսչափ անհաւատներ ու հերետիկոսներ ելեր են , բայց մէկը չէ կըրցած խոստովա-

հանքին դէմ զուրցելու համար աս
պատճառանքը բերել՝ թէ քահանանե-
րը խոստովանանքէ լսած բաներնին
ուրիշի կիմացընեն : Անոնց խոստո-
վանանքի դէմ խօսելուն առջի պատ-
ճառը իրենց հպարտութիւնն է . ա-
նոր համար է որ խոստովանանքին ըս-
քանչելի օգուտները չեն ուզեր տես-
նել : Մոլութիւններուն դէմ խոստո-
վանանքէն զօրաւոր սանձ չունի մեր
սուրբ հաւատքը . ասոր ճշմարտու-
թիւնը ամմէն մարդ իր սիրտը քննել
ուզէ նէ՝ աղէկ կը հասկընայ :



ԵՕԹՆԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ

Սուտ զուրցողը իր սուտերովը կըսաս.
Ժըւի :

ՍԿՈՎՏԻԱՅԻ գեղերէն մէկուն մէջ
Արթուր անուենով ծեր մը կար որ աղ-
քատսիրութեանը համար մեծ անուն
հաներ էր : Ասիկայ աղջիկ զաւակ մը
ունէր որ իր ձկնորս էրկանը հետ մէկ-
տեղ ալէկոծութե հանդիպելով խըղ-
դըւեցան ձուկ որսալու ատեննին : Ա-
սոնցմէ ինը տարեկան մանչ զաւակ մը
մնացեր էր Փետերիկ անուենով, որ Ար-
թուրը իր քովն առաւ : Խեղճ տղան ա-
սանկ ատենէ դուրս իր ծնողքը կոր-
սընցընելովը, շատ գէշ ախտերու տէր
եղաւ, որոնց մէկն ալ աս էր որ ան-
գաղար սուտ կըզուրցէր : Առջի բե-
րանը Արթուրը շատ անգամ կըչեխէր
զինքը, որ ետ կենայ աս ախտէն. «Գխտ

ցիր որ ճշմարտութեան դէմ բան ընողին միճակը դէշ կըլլայ, կըսէր : Փետերիկ բանի տեղ չէր սեպէր իր պատուէն խրատները, երբեմն ան աստիճան լրբութիւն ալ կընէր, որ ինչւան ամմէնուն խելքին դէմ երեցած բաներն ալ եղած բանի տեղ դնելով կըհաստատէր :

Քանի որ տարիքն առաւ նէ, մտլութիւնն ալ հետը մեծցաւ : Քանի բանի անդամ սուտերը բռնըւեցան ու խաղք խայտառակ եղաւ ամմէնուն սուջեր, անունը մէկ սարկի եղեր էր, ու մէկը չիկար որ իր խօսքին հաւտար, բայց ինքը լեզուանի ու զուարճախօս ըլլալուն համար, մէկբանի ընկեր գըտաւ իրեն խելքին յարմար, որ ասոր խելքէ դուրս սուտերուն մտիկ ընելով կըծիծաղէին կուրախանային :

Աիրակի օր մը երբոր գեղացիները իրիկւան ժամէն տուն կըդառնային, Փետերիկ իր բարեկամներէն մէկ երկուքին մօտեցաւ, « Արթանք քիչ մը ծովեզերքը պտըտինք զուարճանանք »

ըսաւ . անոնք ալ սիրով յանձն առին :

Ակովտիային արեւմտեան ծովեզերքը ծովուն վրայ դէպ 'ի դուրս երկրն ցած լեռներ կան . ասոնց ծակերուն մէջ ծովու բազերը իրենց փետուրներովը բոյն կը շինեն , եօթը ութը հաւկիթ կածեն , ու անոնց վրայ թուխս կընստին : Աս փետուրները խիստ փափուկ ու ազնիւ ըլլալուն համար՝ Խալանտացիք իրենց կեանքը վտանգի մէջ կը դնեն , որ երթան ան բոյները վերցընեն :

Փետերիկ աս թռչունները տեսածին պէս՝ իր ընկերներուն ըսաւ . « Այլէք լողալով երթանք՝ սա լեռներուն վրան ելենք » : Արովհետեւ օդը այնչափ տաք չէր , ուրիշները չուզեցին աս բանս ընել . ինքը մինակ հանուեցաւ ու լողալով դնաց ինչւան ժայռերուն մէկուն մօտեցաւ : Շատ աշխատեցաւ որ բոյներուն տեղը կարենայ հասնիլ , բայց չի կրցաւ . դարձաւ իր ընկերներուն , որ քիչ մը ծովեզերքէն հեռացեր էին , սկսաւ պատմել թէ հինգ

Հաս բոյն աւրեցի , ու երսուն հաւ
կիթէն աւելի ծովը ձգեցի : Ամէնքը
մէկ բերան աս ըրած անդթութեանը
համար մեղադրեցին զինքը , բայց անիւ
կայ անհոգ կեցեր կրծիծաղէր :

Շուտով իմացւեցաւ բոլոր քաղքին
մէջ որ Փետերիկը բաղերուն բոյները
աւրեր է . ասիկայ տեղացոց աչքին մեծ
անզգամութիւն երևցաւ . ինչու որ
անոնք ծախելով աղէկ վաստակ կրնէին :
Հարուստ մարդուն մէկը որ ամէնէն
աւելի ետեէ կըլար աս բոյներէն փե-
տուր ժողվելու , քանի մը օրէն ետքը
հանդիպեցաւ սուտզըրուց Փետերի-
կին . սկսաւ աղէկ մը բարկանալ ու
չեխել իրեն՝ հաւկիթները ծովը ձգե-
լուն համար . վասն զի ասանկով խեղճ
թռչունները կըխըրտին ու կըփախչին ,
մեր վաստակին դուռը կըգոցւի ըսաւ :

Անիկայ սկսաւ զուրցել թէ ես ա-
նանկ բան չըրի , կատակ էր ըսածս ,
ես հաւկիթներուն չեմ դպած : Մար-
դը մտիկ չըրաւ անոր զուրցած խօս-
քերուն . բոնեց աղէկ ծեծ մը քաշեց

ձեռքի գաւազանովը որ սորվի թէ անկէց ետքը ինչպէս պիտի զգուշանայ անանկ անդուծ ըլլալէն , և անանկ օգտակար թուշունները փճացընելէն :

Աս խրատովս ալ Փետերիկին խելքը զլուխը չեկաւ , սուտ զուրցելը ձեռքէ չիթողուց : Աս մօլուծիւնը այնչափ մեծցաւ վրան , որ երբեմն կարծես թէ իր սուտերէն ինքն ալ կրխաբւէր , ու աներես կերպով մը խելքի դէմ բաներն ալ երդումներով կը հաստատէր :

Ան առջի պատիժէն մէկ քանի ամիս ետքը , Փետերիկին զլխուն ուրիշ բան մըն ալ հանդիպեցաւ : Փառաւոր հարսնիք մը կար գեղին մէջ , որ շատ քաղաքացիներ ալ հոն հրաւիրուեր էին : Արբոր աս հարսնեօրները նստեր կուտէին կուրախանային , մէկ քանի անդգամ տղաք գացին վարպետութեամբ մտան ձկնարան մը , և առանց ձայն ձուն հանելու հինգ հօխայի չափ ձուկ դողցան ու նստան մէկտեղ կերան : Գեղացիները կարծե-

ցին թէ ասոնք ալ հարսնեոր են . ա-
նոր համար բարկանալու տեղը զար-
մացան , ու վրանին կը ծիծաղէին :
Փետերիկ թէսէտե ասոնց հետ մէկ-
տեղ չէր , բայց լսածին պէս՝ սկսաւ ան-
խելքու թեամբ մէկուն մէկալին դիմա-
ցը պարծենալ ու ըսել , թէ ես էի աս
խրատը տըւողը , աս վարպետու թիւնը
բանեցընողը . իր բարեկամներն ալ կէս
մը հաւտացին խօսքերուն , ու սկսան
մեղադրել զինքը թէ ինչո՞ւ իրենց չէ
իմացուցած որ մէկտեղ ուրախանայ-
ին : Իսկ բուն գողերը երբոր իմացան
թէ փետերիկը իր վրան կառնէ կոր
իրենց ըրած գողու թիւնը , եկան ըս-
կըսան ըսել իրեն , թէ ինչ պէտք էր
աս բանս ամմէնուն պատմել . չէս գի-
տեր որ ետքը զլսուդ գէշ բան մը
կրնայ գալ . բայց անիկայ վրանին ծի-
ծաղեցաւ : Ան ատենը ձկնարանին տէ-
րը աս բաներս տեղն'ի տեղը հասկը-
ցած՝ խել մը վկաներ ժողվեց , որ փե-
տերիկին գողու թիւնը իր բերնէն լսե-
րէին , բոնեց զինքը՝ դատաւորին առ-

ջեր հանեց : Փետերիկը աս տեսածին պէս՝ կարծես թէ կայծակ ինչաւ դըլխուն , կուզէր ինքզինքը արդարացընել դատաւորին առջեր, ըսելով, թէ ես ամենեւին ատանկ բան ըրած չունիմ. կատակ մըն էր ըրի : Արու կըսես, քըսան վկայէն աւելի կար որ կըսէին թէ ինքը իր բերնովը պատմեց մեզի : Աւստի վճիռ եղաւ որ վեց ամիս բանտ կենայ, գողցած ձկներուն ստակը և դատաստանին համար եղած ծախքն ալ վճարէ :

Ինչ երկայն ատեն երեցաւ Փետերիկին ան վեց ամիսը : Ակսաւ լալով ողբալով մեծամեծ առաջադրութիւններ ընել որ ազատութիւն դոնալէն ետքը մէյմըն ալ ան մոլութեան նշանն ալ վրան չիթողու : Իրաւցընէ նեղութիւնները ու գողութեան համար հանած գէշ անունը քիչ մը ատեն իր լեզուն բռնեցին, բայց ինչ բանի կուզան ան առաջադրութիւնները, որոնց հիմը խախուտ է, մարդկանց վախէն առաջ եկած է, պղտիկ առիթ մը կամ

փորձութի մը բաւական է ասանկ առաջադրութիւնները մոռցընել տալու :

Ա երջապէս Փետերիկը ելաւ բանտէն խոնարհած , բայց մոլութիւններէն չէր խալսած . դնաց իր պապը հոգեւորքի մէջ գտաւ . անանկ որ խեղճ ծերուկը հազիւ կրցաւ հասկըցընել անոր , թէ ինչ մեծ ցաւ է իրեն անոր գէշ վարքը :

Աիրակի օր մը Փետերիկը ժամ դընաց պատարագ տեսնելու : Նանը յարմար եկաւ որ դնաց ան օրւան քարոզն ալ սուտ խօսելու վրայ եղաւ . ուստի քարոզիչին ամմէն մէկ զուրցած խօսքը Փետերիկին սիրտը նետի պէս կը ծակէին : Ամմէնքը ժամուն մէջ ըսկսան ասոր վրայ նայիլ , և կարծես որ ըսել կուզէին թէ քարոզիչը սուտ խօսողին խեղճութիւնը և զգուելի ըլլալը Փետերիկին քաշած խեղճութիւններովը կըջանայ հասկըցնել :

Աս բաներս խել մը մտմըտալէն ետքը , ամմէնէն առաջ ժամէն դուրս ելաւ , որ զինքը ուրիշները ծաղր չընեն : Արբոր սուն դարձաւ նէ , պապը մեռած գտաւ , ասով խեղճ տղուն

վիճակն ալ բողոքովն փոխեցաւ : Աջ ստակ ունէր , ոչ հոգացող , ուրիշ ճար չունէր՝ բայց եթէ գեղին մէջ գոնէ գուռ իննալ , ողորմութիւն ուզել , բայց ամմէնքը իր խաբէութիւնը գիտնալով , շատ անգամ վճռնտելէն զատ՝ զըռներնին ալ չէին բանար : Ամանք կըտոր մը հաց տալու համար՝ չէ չըսին . բայց մէկը չեղաւ որ իր բովն առնէ զինքը : Արդուրցէր ամմէնուն թէ նայեցէք ընտոր ուժըս տեղն է , աղէկ կըրնամ ծառայել , բայց մտիկ ընող չիկար : Ան ատենը ելաւ իր գեղէն , ուրիշ տեղ գնաց որ հաց գտնէ : Հարուստ մարդու մը քով ծառայ եղաւ . բայց իրեք ամիս չանցաւ , վճռնտեց ա նիկայ՝ ստախօս ըլլալուն համար : Ասանկ շատ բանի ձեռք զարկաւ , ու մէկն ալ գլուխ չիկրցաւ հանել . ան ա տեն ճարը հատնելով՝ մուրացկանութիւնը ձեռք առաւ , ու ասանկ խեղճ ողորմելի կերպով՝ քսանըհինգ տարեկան մեռաւ :

Տեսէք թէ չար սովորութեան ծայրը ուր կերթայ :

ՈՒԹԵՐՈՐԳԻ ԻՐԻԿՈՒՆ

Արհամարտոս մարդը իր պատիժը կրգտնայ :

ԱՄՊՈՒՐԿ քաղաքը հարուստ վաճառական մը կար . ասիկայ տրղայ մը ունէր Գուլիէլմոս անունով , ու շատ հոգ կընէր աղէկ կերպով կրթութելու զինքը : Քանի քանի երեւելի վարպետներ տղուն չորս զին առած՝ կըջանային որ աս տղան ամիէն բանի մէջ առաջ երթայ : Անիկայ ալ բարակամիտ տղայ ըլլալուն՝ քիչ ատենի մէջ սորվեցաւ հին ու նոր լեզուներ , աստղաբաշխութիւն , թուաբանութի , քիմիականութիւն , բնական պատմութիւն և աշխարհագրութիւն . ամսոն որ էն հարկաւոր բանը սորվեցնելու մոռցան , որ էր մտքին հետ սիրտն ալ կրթել , առաքինութեամբ զարգարել : Տղուն

Հայրը իր զաւակին առաջ երթալը տեսնելով՝ ուրախութենէն ինչ ընելիքը չէր գիտէր . զինքը սիրելէն փայփայելէն գովելէն չէր կըշտանար : Ամէն իրեք ամիսը մէյմը քննութիւն ընել կուտար տղուն՝ իմաստուն մարդիկ ներու առջևը . հարցմունքը լըմըննալէն ետքն ալ փառաւոր սեղան մը կը նէր ամմէնուն : Ամմէնքը երեսպաշտութիւնը ձեռք առած , ժկսան ըսել թէ աս ինչ գիտուն ու իմաստուն տղայ է , իր տանը փառք ու պարծանքը պիտի ըլլայ ասիկայ : Ասոնցմով տղան սկսաւ օրէ օր ուճիլ ու հպարտանալ , փառք պատիւ փնտրուել , ամմէնքը արհամարհել , ամմէնուն տիրել :

Ատեն ատեն վար կիջնար՝ իրենց տանը ծառաներուն հետ խօսակցութիւն ընելու . բայց երկու խօսքին մէկը անոնց վրայ ծիծաղիլ էր . անոր համար անոնք ալ երբոր կըտեսնէին թէ ասիկայ իրենց կուգայ , մէյմէկ պատճառ բերելով կըփախչըտէին . ասով կըհասկըցնէին իրեն , թէ ան ըրած .

ներուն ամմէնքը չեն կրնար դիմա-
նալ :

() ր մը ասիկայ խոհակերոցը մտաւ,
տեսաւ որ հոն կոպիտ գեղացի մը կէս-
օրւան սեղանին համար նապաստակ
ներ բերեր է : Սօտեցաւ քովը, սկսաւ
ասդիէն անդիէն բաներ հարցընել,
ան ալ իր գեղջուկ կերպովը պատաս-
խանները տրւաւ :

Գուլիէլմոս տեսնելով որ աս մար-
դուն խօսքերը իրեն աղէկ զուարճու-
թիւն կը բերեն, սկսաւ ծիծաղիլ վրան,
ու ծանր ծանր խօսքերով անոր կոպ-
տութիւնն ու տգիտութիւնը երեսին
տալ : Սեղճ գեղացին որ ասանկ բան
լսել խելքէն չէր անցած, երեսը կա-
խեց ելաւ գնաց իր բանը :

Մէկբանի օրէն ետքը նորէն եկաւ.
Գուլիէլմոսն ալ նորէն մօտեցաւ ա-
սոր. « Ա՛յ հիմա դուն մէկալ օրւընէ
աւելի իմաստո՞ն ես, [թէ չէ » ըսաւ :
« Չեմ գիտեր շիտակը » ըսաւ գեղա-
ցին : « Օ՛րոցէ տեսնեմ, լուսնին շրջա-
պատը՝ մեծութիւնը որչափ է, գիտե՞ս :

— Չէ պարոն : — Ո՞րչափ կար-
ծես որ ըլլայ : — Ինծի կերևնայ թէ
էն քիչը սա վարի տակառին բերնին
չափ կայ » :

Գուլիէլմոս սա խօսքիս վրայ բարձր
ձայնով ծիծաղելէն ետքը , « Ո՛վ տըխ-
մար դեղացի ըսաւ , չէս դիտեր որ լու-
սինը իր լոյսը արեւէն կառնէ , աշխրբէս
տասւիրեք անգամ պզտիկ է , մեզմէ
300,000 մղոնի չափ հեռու է , ու
ծովին ատեն ատեն լեցւելուն ու քաշ-
ւելուն պատճառը անիկայ է » : Ըս
խօսքերս դեղացիին համար արպերէն
խօսիլ մըն էր , ուստի բան մը չի հաս-
կըցաւ , գլուխը կախեց , ելաւ գնաց բա-
նը : Տանը խոհարարը խելացի ու բարե-
սիրտ մարդ մըն էր , թէպէտև ասանկ
աստղաբաշխական բաներու դեղացիէն
չատ աւելի տեղեկութիւն մը չունէր ,
ասիկայ սկսաւ զուրցել Գուլիէլմոսին
թէ « Ի՞նչ պէտք էր ան խեղճ դեղացին
ատ կերպով ամբչցրնել , ինքը ի՞նչ յան-
ցանք ունի երբոր իրեն սորվեցրնող
չէ եղած » : Բայց մեր իմաստակը բա-

նի տեղ չի դրաւ անոր խօսքերը, դարձաւ ըսաւ ալ, թէ « Տղէտ մարդը իմ դիմացս մէկ ստակ մը չաժէր » : Ասոհարարը կուզէր ասոր պատասխանը տալ, բայց անիկայ խօսքը մէկէն կըրտրեց, ու սիրտը գոհ ցուցընելու ձայնով մը ըսաւ իրեն. « Անտարակոյս դուն ալ չես գիտեր որ արեւը աշխրութես մէկ միլիոն՝ իրեք հարիւր երսունումէկ հազար անգամ մեծ է, ու աշխրութես հարիւր հազար միլիոն մը զոնէն աւելի հեռու է » :

Կառանք թին տակէն ծիծաղեցաւ ան իմաստակին վրայ, մէյմըն ալ տըղուն հայրը վրայ հասաւ, խօսքը վերջացաւ :

Արկրորդ օրը նորէն եկաւ գեղացին, ու նորէն խել մը ծաղը եղաւ. Գուլիէլմոսը դարձաւ ըսաւ ասոր թէ դու լեռընցի կընամանիս, ձեռքիդ կաշին կարծես թէ փղի կաշի է. կօշկա կարներուն կըրնաս խրկել որ ոտքի աման շինեն, և ասոր նման անշնորհ խօսքեր :

Արբոր դեղացին տուն դարձաւ,
պատմեց իր հօրը՝ Գուլիէլմոսին ը-
րածները . ետքը ըսաւ թէ ալ ես ա-
մենեւին ան տունը ոտք չեմ կոխեր .
իրաւ որ ես տղէտ եմ , բայց ես իմ
խելքս ան հարուստ Գուլիէլմոսին
խելքին հետ չեմ փոխեր . որ իր հը-
պարտութեամբը ու թեթևսօլիկ կեր-
պովը խենթէ մը վեր չիմընար :

Հայրը հանդարտեցուց զինքը . հոգ
մըներ ըսաւ , ես կիրակի օրը կերթամ
հօրը հետ կրխօսիմ , տղուն ըրածնե-
րը կը հասկըցընեմ իրեն : Բայց անի-
կայ օրով առաջ իր պատիժը գտաւ :

Գուլիէլմոսին հայրը իր բարեկամ
ներուն հետ դաշնագրութիւն մը ը-
նելէն ետքը , կերակուրի բոնեց զի-
րենք : Օդը աշնանային սիրուն օդ մը
ըլլալով , կերակուրէն ետքը ասոնք ու-
ղեցին մօտիկ անտառը երթալ սլքտը-
ալի . ուստի մէկէն կառքը պատրաս-
տուեցաւ , ձիերը լըծուեցան , ու մտան
դային . Գուլիէլմոսն ալ հետերնին :
Արբոր անտառը մտան , խոււմբ խոււմբ

բաժնւրւած՝ սկսան մէյմէկ դին երթալ պտրտիլ. իսկ Գուլիէլմոսը՝ ես խորունկ բաներ ունիմ մտմբտալու ըսելով՝ դը լուխը քաշեց, ու մինակ գնաց անտառին ներս տեղւանքը մտաւ: Մէյմըն ալ ճամբան կորսընցուց, չէր գիտէր ուր կերթայ և ուսկից դուրս պիտի ելէ, արևը մտաւ, մութը կոխեց, անիկայ աւելի ներս զարկաւ: Աւրիշները մըտան կառքը, դարձան տուն՝ ըսելով թէ ինքն ալ դարձած է:

Գիշերը վրայ հասաւ, Գուլիէլմոս ոչ ուտելու բան ունէր, ոչ հանգչելու տեղ մը: Սկսաւ օգնութիւն կանչել. որչափ որ կըրնար կըպոռար, բայց արձագանգէն զատ ուրիշ պատասխան չէր առնէր: Ան միջոցին փիլիսոփայութենէն խեր չիգտաւ. վախը արեց վրան, մէկ կողմանէ ալ կըքալէր առաջ կերթար: Մէյմընալ յանկարծ ոտքի ձայն մը լսեց հեռուանց, մէկէն սիրտ առաւ, սկսաւ դէպ ՚ի ան ձայնը երթալ, ու առանց իմանալու անտառէն ելաւ դուրս, բայց կոխած տե-

դը չիտեսնելով , խորունկ ու ջրաս
լճի մը մէջ ընկաւ . որչափ որ ուժ կու
տար կաշխատէր վեր ելլելու , այնչափ
տակը կերթար . ջրային խոտերուն ար
մատներն ալ ոտւրներուն պըլըլելով
թող չէին տար որ վեր ելլէ : Ան ա
տեն ճարը հատած՝ սկսաւ լալ ողբալ
օգնութիւն կանչել : Առջի կէսօրը
նէն 'ի վեր անօթի մնացեր էր . մէկն
ալ չիկար որ իրեն օգնէր դուրս հա
նէր . ուստի մահուան դուռը հասածի
պէս անդադար կուլար կրկանչըռտէր .
ինչւան որ նորէն ոտքի ձայն մը լսեց :
Մէյ մըն ալ տեսնէ որ մէկ երիտա
սարդ գեղացի մը եկաւ լճին քովը՝ ը
սելով թէ ուր ես : « Ահա հոս ջրին
մէջն եմ ըսաւ , ցեխը ինչւան կէս մէջքս
հասեր է . խոտերը ոտվըներուս պըլ
լըլեր են , ոչ կրնամ առաջ դալ , ոչ ետ
քաշիլ . հողիդ սիրես , ողորմէ՛ ինծի ,
հանէ զիս աս տեղէս :

— Տէր Աստուած , աս ինչ ձայն է,
եւ աս մարդը պիտի ճանչնամ » ըսաւ
գեղացին : « Աս ալ գբեղ կը ճանչնամ

ըսաւ Վուլիէլմոս լըճին մէջէն, իմ սիրելի Յակոբս, դուն ան գեղացին չե՞ս որ մեզի նապաստակ կը բերէիր, ես Վուլիէլմոսն եմ:

— Եւ, ինչպէս եղաւ պարոն Վուլիէլմոս, որ հրամանքդ հոս եկար, ասանկ ատեն հոս ինչ բան ունիս. չըլլայ թէ քու իմաստութիւնդ քեզ հոս բերեր ձգեր է: Անանկ է նէ խնդրեմ, պարոն, դուրցէ ինձի, չըլլայ թէ լուսնին մեծութիւնը չափելու համար հոս եկած ես. խիստ չափազանց է ատ ուսումնասիրութիւնը, դուն որ իմաստուն մարդ ես, պէտք էր ինչչան հիմա դուրս ելլելու ճամբան դանէիր. ինչպէս կըրնայ ըլլալ որ ան մարդն որ երկրնքին աստղերը կը չափէ, իր կոխած տեղը՝ իր առած քայլը չափել չի գիտնայ:

— Ա՛հ, կաղաչեմ Յակոբ, օգնէ ինձի, ձեռքդ սուր որ դուրս ելլեմ:

— Վայ, ատ ինչ կըսես պարոն, ես հրամանքիդ ձեռքս երկրնցընեմ. ատ մտածելու բան չէ. հապա ձեռքդ աղտոտի նէ. իմ ձեռքիս կաշին փղի կաշի

չէ մի . լեռնցիի մը ձեռքովը խալը սիլ կուզես . աս ըլլալու բան չէ : Արհաս բարով սլարոն Գուլիէլմոս . գիշեր բարի . ջուր մտնելը քեզի օգուտ է , հանգիստ կեցիւր մէջը » ըսաւ , ու ձեւացուց թէ ձգեր կերթայ կոր :

Գուլիէլմոսը սկսաւ ծեծ կերած տըղու պէս լալ : Հասկըցաւ թէ շատ գէշ բան ըրեր է որ ան կերպով վարւեր է խեղճ գեղացիին հետ . ու մտքէն՝ անոր ըրածներուն իրաւունք կուտար որ իրեն չէր օգնէր : Աորէն ձայնը բարձրացուց , ու լալով կաղաչէր Յակոբին , որ գինքը չիթողու ան խեղճութեան մէջը : Ահկալը առջի բերան քիչ մը ատեն սպտասխան չիտըլաւ . բայց վերջը իր սիրտն ալ չդիմացաւ . ծառէն մեծ ճիւղ մը կտրեց՝ երկրնցուց Գուլիէլմոսին ու դուրս հանեց :

Ասանկով ելաւ ան խեղճը փոսէն դուրս , փուեցաւ դետին ընկաւ , վրան գլուխը թրջած աղտոտած , սլաղէն ալ ջերմոտի պէս կըզոզզըզար , չէր գիտէր թէ ինչպէս շնորհակալ ըլլայ

իր բարերարին : Օգով գիշեր մըն էր, օդը հանդարտ, աստղերն ալ կըրտալիւ լէին : Քիչ մը կենալէն ետքը Գուլիէլ մօսը հարցուց Յակոբին, թէ քաղքէն ո՞րչափ հեռու են :

« Քաղքէն վեց մղոն հեռու ես, ըսաւ, մի կարծեր թէ աս իրիկուն կարենաս հոն հասնիլ. վասն զի ատենը խիստ ուշ է : — Աւրեմն ես ի՞նչ պիտի ընեմ հոս : — Ի՞նչ որ կուզես ան ըրէ. թէ որ ամօթ չես սեպեր քեզի՝ ինծի պէս տխմար գեղացիի մը ընկեր ըլլալը, աս գիշեր ես քեզի իմ կաղնի ծառիս տակը հանդէլու տեղ կուտամ. վասն զի ես աս գիշեր իմ հօրս ձիերուն պահպանութիւն կընեմ հոս. վաղը առտուն եղբայրս կուգայ իմ տեղս կըկենայ, ես տուն կը դառնամ : — Ինչպէս որ կուզես՝ անանկ կընեմ, բայց գիտցած ըլլաս որ ես անօթի կըմեռնիմ կոր :

— Շատ լաւ. թէ որ բանիդ ձեռք կուտայ լեռընցիին կերածը ուտելնէ՝ ինչո՞ւ չէ, երթանք քիչ մը բան ու

տենք » ըսաւ ու սկսան երթալ: Գուլիէլմոս կարծես թէ գեղացիին ետեւն կախուելու կերթար, այնչափ կըտանջէր զինքը իր խղճմտանքը՝ որ Յակոբին սիրտը իր իմաստակ կերպովը ցաւցուցեր էր ատենով: Անիկայ ալ ամմէն մէկ խօսքին մէյմէկ սուր պատասխան տալով՝ ասոր սիրտը կըխըշխըշցընէր:

Վերջապէս հասան ծառին տակը, ուր որ ծառի ճիւղերով ողորմելի խըրճիթ մը շինած էր: Անկողինը՝ կտոր մը չորցած խոտ էր, բարձն ալ պատըռտած հին տոպրակ մը: Արկու խոշոր շուն կեցած պահպանութիւն կընէին ութը ձիու, որ երկայն չուանով ան ծառի կապած կարածէին:

« Հրամէ նստէ պարոն Գուլիէլմոս, ըսաւ Յակոբը, ահա աս է իմին սրահս, բոլորն ալ քեզի կուտամ:

— Ա՛հ, ինչպէս ցուրտ է, բարեկամ, կտոր մը կրակ չես կըրնար վառել որ լաթերս չորցընեմ: — Ինչո՞ւ չէ, աղէկը կըրնամ, բայց խնդրեմ, ըսէ ինձի, ամենեւին զբքի մը մէջ կարգացած

չէս , թէ մէկ տեղ մը կրակ չըլլայ նէ
ինչպէս տաքնալու է : — Չէ , ամենևին
միտքս չիգար : — Այլ է . հիմա ես հը
րամանքիդ կըսորվեցնեմ : Աելեն շուտ
շուտ մէկդիէն մէկալ դին կըքալես , ձեռ
ւրներդ կըթօթւըտես , աղէկ շարժ
մունք մը կընես , անով արիւնդ կըս
կըսի ստըտիլ , ու մէկէն կըտաքնաս :
“Այլ է ես ինչ որ կընեմ նէ , դուն ալ
ինձի պէս նման ըրէ ” : Աս ըսելով
սկսաւ գեղացին ասդիս անդին վազ
վըռտել որ տաքնայ :

Գուլիէլմոս հասկըցաւ որ ան գե
ղացին խաղալիքն եղեր է , որ ինքը
այնչափ առաջուց կարհամարհէր . քիչ
մը անոր պէս շարժմունքներ ըրաւ ,
բայց նորէն սկսաւ ըսել թէ կըմըսիմ
կոր : Ան ատեն Յակոբը գնաց կը
տոր մը չոր խոտ բերաւ , կածքարը
հանեց զարկաւ , ու աղէկ կրակ մը վա
ռեց : Ան միջոցին որ Գուլիէլմոս կե
ցեր բոցին դիմացը իր հագուստը կը
չորցընէր , Յակոբը գնաց քանի մը
գետնախնձոր գտաւ , բերաւ մոխիրին

մէջ եփեց , հանեց մէկ երկուքը Գու-
լիէլմոսին հրամայուց , հետն ալ կտոր
մը մըքլած Ֆիլէմէնկի պանիր ու չոր
հաց . « Ահա ասոնք են իմ ունեցած
կերակուրներս , ըսաւ . ուր էր թէ ա-
ւելի փափուկ բաներ հրամայենէի քե-
զի . բայց ինչ ընեմ որ չունիմ . դուք
որ քաղաքացի էք՝ ասանկ կոպիտ կե-
րակուրներու չէք սորված . բայց մի
վախնար , աս կերակուրը քեզի վնաս
մը չիտար : Աղէկ է որ մարդ ատեն
ատեն ասանկ բերնիփոխ ընէ . մէկ
խօսքով , աս իրիկւան խրատը շատ օ-
գուաներ կրնայ ընել՝ ուղղղին » :

Գուլիէլմոս աս յանդիմանութիւնն
ալ լսեց , ու ձայն մը չի հանեց : Խել
մը կենալէն վերջը՝ « Դարւած ես » ը-
սաւ իրեն Յակոբը : « Ա՛հ , ո՞ւր է թէ
խմելու բան մը գտնայի : — Ինչո՞ւ
չէ . հիմա ես գտնեմ քեզի . բայց մի
կարծեր թէ բերելիքս գինի , կամ օշա-
րակ (շէրպէթ) , կամ օղի է . մեզի պէս
կոպիտ գեղացիներուն խմածը զուս
ջուր է . փափք Աստուծոյ , անանկով

ալ ողջ առողջ կասարինք » : Ասոնք
զուրյեղով՝ զնաց ամանով մը ջուր բե-
րաւ ու տըւաւ Գուլիէլմոսին ձեռքը .
անիկայ թէեւ քիչ մը զըզւեցաւ , բայց
գրաւ բերնին՝ կուշտ մը խմեց :

« Հիմա որ կըշտացար , կընաս խո-
տին վրայ պառկիլ , վրադ ալ աս հին
քուրձը առնել ու քնանալ . ես պէտք
է արթուն կենամ , կրակը վառ պա-
հեմ , ու ձիերուս պահպանութիւն
ընեմ » : Գուլիէլմոս շատ աղաչանքի
չըսպասեց . ընկաւ պառկեցաւ խրձի-
թին մէջը , մէկէն քունը տարաւ :

Գեղացին ատեն ատեն կուգար կը-
նայէր , ու կըտեսնար որ քուն է .
« Սեղճ տղայ , կըսէր ինքնիրեն , ինչ ան-
խելքութիւն է ըրածն որ ուրիշները
անգագար ծաղը կընէ , բանի տեղ չի-
զներ . ինչո՞ւ , իրեն պէս իմաստուն չեն
եղեր . կարծես թէ աշխրոքիս վրայ
ամէնքն ալ իմաստուն պիտի ըլլան :
Աս ինչ անիրաւութիւն է . մենք ա-
րիւն քրտինք կըմտնենք , ատ մարդի-
կը կըկերակըենք , ու իրենք զմեզ կար-
համարհեն . մենք գիշեր ցորեկ ասոնց

ազահոլթիւնը կշտացընելու հետ ենք,
ու իրենք մեզ բանի տեղ չեն դներ:
Բայց ես կըլուսամ որ ասկէ ետքը
Գուլիէլմոսին խելքը գլուխը կուզայ,
ալ մեզի հետ առջի կերպը չիբանե-
ցըներ: Մէյմընալ, մենք ալ նոյն Աս-
տուծոյ ստեղծուածը չենք մի, ասա-
ղերուն մեծութիւնը՝ երկնքին շարժ-
մունքը չիդիտնալով, աշխրբքիս օ-
գուտ մը շունինք մի, մեր հողին ալ
անոնց հողին պէս չէ մի: Իրաւ է որ
մարդ մարդէ տարբերութիւն ունի,
բայց ամմէնքն ալ մէկ հօր տղաք են,
հաւատքնիս մեզի կըսորվեցընէ, թէ
ամմէնքս ալ եղբայր ենք, ամմէնքս ալ
Աստուծոյ որդիք ենք, ամմէնքս ալ
Քրիստոսի տեառն մերոյ արիւնովը
գընւած ենք, ուրեմն աս տղայական ու
անձոռնի ամբարտաւանութիւնը ինչ
պիտի ըլլայ »:

Աս բաներս Յակոբ նստեր կըմըտ-
մըտար, մէյմալ անդիէն շները սկսան
հաջել, գաւազանը առաւ վազեց դնաց,
բայց մարդ մը՝ բան մը չիտեսաւ:

Գուլիէլմոս շուներուն ձայնէն ար-

Թընցաւ , քունը փախաւ , բայց ձայն
չէր հանէր . կարծէր թէ գող եկեր
է ձիերուն վրայ : Արբոր Յակոբը
տեսաւ նէ՛ սիրտը հանդարտեցաւ :

Ան գիշերը ուրիշ նոր փորձանք մը
չի հանդիպեցաւ . առաւօտը կանուխ
Գուլիէլմոս հագուստը քիչ մը մաք-
րելէն ետքը ելաւ տուն գնաց : Օր-
նողքը մեծ մտամբողքի մէջ ընկեր էին
իրեն համար , ու շատ սրտադողով
անցուցեր էին ան գիշերը , անոր հա-
մար երբոր տեսան նէ՛ շատ ուրախա-
ցան , ու ստիպեցին որ գլխէն անցածը
պատմէ : Գուլիէլմոսն ալ տեղն ՚ի տե-
ղը պատմելէն ետքը , աղաչեց , որ Յա-
կոբին աղէկ փոխարէն մը ընեն : Ան-
կէ վերջը մէյ մըն ալ անանկ ամբար-
տաւանութեամբ չիվարեցաւ : Այն-
չեց ան գեղացին , իրեն ժամացոյց
մը տրւաւ հայրը , անկէց ՚ի զատ յիսուն
ոսկի ալ իրեն տարեկան եկամուտ կա-
պեց , որ իր տղուն հոգևոր ու մարմնա-
ւոր կերպով ան մեծ օգուտը ըրեր էր :

ԻՆՏԵՐՈՐԴԻ ԻՐԻԿՈՒՆ

Պզտիկուց մոլութենէ մը ետ չիկեցողին
վերջը գէշ է :

ՄԱՐԿԵՂՈՍԻ գեղին մէջ, ինչպէս
ուրիշ գեղեր ալ, գէշ սովորութիւն մը
կար, որ շատ գեղացիներ կիրակի
ու տօնի օրեր մէկտեղ կը ժողովէին ու
գինետուն մը կերթային գինի խմելու:
Աս ախտիս գէշ հետեանքները տես
նելով ու լսելով աւագերէցը, սիրտը կը
կտրրտէր. նոյն շաբթուն մէջ ալ ծեր
գեղացի մը մեռաւ հոն՝ տարիներով
բանտի մէջ կենալէն ետքը: Աս մար-
դուս վարքը մեծ խրատ առնելու վարք
մըն էր. անոր համար աւագերէցը ու
գեց ասիկայ պատմելու պարոն Մար-
կեղոսին տղոցը, որ խելք սորվին, ու
որ և իցէ մոլութենէ զգուշանան: Այ-
րանի թէ ամիէն աս պատմութիւնը

կարգացողն ալ աս խելքը սորվի :

Պլանշար անունով տղայ մը ան գեղին հարուստ երկրագործներէն մէկուն տղան էր . ասոր հայրը շուտով մեռաւ , բայց աղէկ հարստութիւն թողուց տղուն . գեղեցիկ տուն մը , տասը ազնիւ ձի , քսանւերկու կով , խել մը խոզ ու ոչխար . ցորեննոցն ալ լեցուն ցորեն ու դարի : Պարտէզը գեղեցիկ ու պտղաբեր ծառերով զարդարած էր . արտերը աղէկ բանեցուցած , բաւական ստակ ալ թողուցեր էր , ու ամմէն բաները աղէկ կարգի մէջ դրած էր : Քանի որ Պլանշարը պզտիկ էր , ամմէն բան մայրը կրկառավարէր . բայց երբոր տղան մեծցաւ , կառավարութիւնը ինքն առաւ , մօրը եկամուտ մը կապեց ու զատ տուն մը բնակեցուց , որ իր ծերութեան օրերը հանդիստ անցընէ : Շատ չանցաւ՝ մայրը մեռաւ . Պլանշարն ալ ինքնազուլուխ տէր եղած՝ խել մը ատեն աղէկ դարձուց իր բաները . բայց կամաց կամաց անհոգութիւնը տիրեց վրան .

սկսաւ ինքզինքը խմելու տալ, ու իր ընելու բաները ծառաներուն թողուլ, աս եղաւ իրեն կործանելուն սկիզբը, և ինքը չէր մտածէր, թէ վերջը ուր պիտի երթայ : Եր հօրը բարեկամները սիրով սկսան խրատել զինքը, թէ աս բռնած ճամբադ չելլեր, աչքդ բաց, բաներդ երեսի վրայ մի թողուր : Ես խօսքերով Պլանշարը քիչ մը խեղդ գլուխը ժողովեց, քիչ մը ատեն զինեւտուններէն հեռու կեցաւ :

Բայց ան տարին երկիրները խիստ առատ բերք բերին, Պլանշարն ալ խել մը ստրկի տէր եղաւ, միտքը զրաւ թէ այնչափ ստրկով ինչ որ ուզէ կրնայ ընել, ու նորէն ձեռք առաւ իր առջի մոլութիւնը : Բարեկամները երբոր տեսան որ ասիկայ ամմէն իրիկուն զինով տուն կրդառնայ, սկսան նորէն խրատել զինքը, «Գիտնաս որ ատով նախ քու առողջութեանդ մնաս կրնես, կրսէին, ետքը անունդ ալ ամմէնուն առջին մէկ ստրկի կըլլայ, թէ որ հիմա ունեցած ստակդ աս կերպով փը-

ճացրնես նէ , վաղը մէկալն օր վարու-
ցանի ատեն ձեռքդ բան մը չիմընար» :

Պլանշար ասոնց զուրցածին իրաւունք
տըւաւ , խոստացաւ ալ որ մէյմըն ալ
չընէ , բայց խօսքին վրայ չիկեցաւ :
Քոլոր ուժովը իր մոլութեանը դէմ
կենալու տեղ , սկսաւ աւելի չարաչար
խմել : Անով քանի զնաց միտքը տկա-
րացաւ , յիշողութիւնը գրեթէ բոլոր
պակսեցաւ , սիրտը փոխւեցաւ , ու էն
զըզուելի մոլութիւններուն մէջ ընկաւ :

Որովհետեւ բոլոր կառավարութիւ-
նը իր ծառաներուն յանձներ էր , սկսան
իւր բաները օրէ օր դէշնալ , ինքն ալ
եղած ծախքերը վճարելու համար
պէտք եղաւ որ ունեցած երկիրներուն
մէկ կտորը ծախէ , փոխ ստակ առնէ ,
պարտքի տակ իյնայ , էն դէշն ալ ան
եղաւ որ ամմէնքը իր վրայ ունեցած
համարմունքնին կորսընցուցին :

Մէկ գիշեր մըն ալ չափէ դուրս
խմած՝ զլորտըկելով տուն գառնալու
ատենը ջաղացքի մը դիմացէն անցաւ .
չիտակ իր տունը երթալու տեղը գը-

նայ ջաղացքին դուռը սկսաւ խառնել:
Ջաղացպանը շանը ձայնէն արթնցաւ,
հարցուց թէ ո՞վ է, ի՞նչ կուզէ. երբոր
պատասխան չառաւ, իրեք անգամ
նորէն հարցուց, ու սկսաւ սպառնալ
ըսել՝ թէ հիմա հրացանս վրայ կը
պարպեմ: Արբոր տեսաւ որ անիկայ
դեռ դուռը կըխառնէ՝ բանալ կուզէ,
ու իրեն պատասխան մը չիտար, ձա-
րը հատաւ, քաշեց պարպեց հրացանը,
Պլանշարն ալ զարնըւեցաւ ընկաւ,
մէկէն սկսաւ լալով կանչվըռտել: Ջա-
ղացպանը՝ որ աս բանս ահամայ ըրեր
էր, երբոր ձայնը լսեց՝ իր մարդիկնե-
րուն հետ վար վազեց որ նայի թէ ո՞վ
է: Մէյմըն ալ տեսնէ որ Պլանշարն է
արիւնըւայ գետինը փրուած, ու ձախ
սրունքը զարնըւած. մէկէն առաւ զին-
քը ներս տարաւ՝ անկողինի մը վրայ
դրաւ, ու շուտով բժիշկ կանչեց: Շատ
կերպով հարցուց Պլանշարին, թէ միտ-
քըդ ի՞նչ էր որ եկեր դիշեր ատեն զիս
անհանդիստ կընէիր. բայց անիկայ
գինով զլիսովը մէկ երկու խօսք հազիւ

կրրցաւ զուրցել ու այսչափ իմացուց,
թէ իր միտքը կատակ մը ընել է եղեր:

Ահա վերաբուժը, նայեցաւ վերքը,
ըսաւ թէ վտանգաւոր չէ, և որովհե-
տեւ զինքը մէկէն տունը տանիլ չէր
ըլլար, ջաղացպանը յանձն առաւ իր
տունը պահելու, ինչպէս որ ըզընա-
ցաւ նէ՝ ամմէն պէտք եղածը հոգաց,
դեղերուն ստակն ալ ինքը վճարեց:
Հարաթներ անցան, Ալանշար աս
փորձանքին պատճառաւ իր զինե-
մու ընկերներէն հեռու մնաց, ուրիշ
ներն ալ մտքերնին դրին թէ աս բա-
նըս իրեն աղէկ խրատ եղաւ, բայց
ետքը տեսան թէ գէշ սովորութիւն
մը մարդուս վրայ ինչպէս չարաչար
կրտիրէ: Ալանշարը բոլորովին ըզընա-
ցածին պէս սկսաւ նորէն զինետուն
երթալ:

Տարի մը ասանկ իր օրերը անցը-
նելով՝ կամաց կամաց ամմէն բաները
ծախեց, ամմէն բան մսխեց, կտոր մը
երկիր մնացեր էր, ան ալ աժան գնով
մը ծախեց: Ահկը մէկալը կը հարցը-

նէին իրեն թէ ամմէն բան ծախելէ գ
ետքը ինչ պիտի ընես : Աս ստակ կը
գրտնեմ կըսէր :

Վերջապէս եկան հասան ան խեղ
ճուժեան օրերը , պէտք եղաւ որ Պը
լանշարին ձեռքէն ելլան բոլոր ունե
ցած բաները , ինքն ալ գլուխը դնելու
տեղ մը չունենալով սկսաւ մտմըտալ
թէ իր վերջը ինչ պիտի ըլլայ . բայց
ինչ օգուտ , բանը բանէն անցեր էր :
Կնաց իրեն գինեմոլ բարեկամնե
րուն , խնդրեց որ իրեն օգնեն , բայց
ամմէնքն ալ ետ կեցան : Անոնք որ
ատենով իրեն հետ կուտէին կըխրմէ
ին , վերջը կարծես թէ և ոչ կըճանչ
նային զինքը , ուստի կաթիլ մը ջուր
ալ իրեն չիտրւին : Աս խեղճուժիւնը
աւելցաւ ձմեռը վրայ հասնելով , այ
րի պառաւ մըն ալ խղճաց Պըլանշարին
վրան , ու իր տունը առաւ . կըսպա
սէր որ ամառը գայ նէ՛ երկրագործի
մը քով դնէ զինքը , որ հաց գըտ
նէ : Հինկ ամիս ասանկ անցընելէն
ետքը օր մը պառաւը առաւօտանց ե

բաւ տեսաւ որ Պլանշարը շերեւոր ,
զնաց մտաւ Պլանշարին պառկած
տեղը ,տեսաւ որ խեղճը գետինն ըն-
կեր փրուեր է , լեզուն ալ բռնըւած :
Սրտին ցաւը մտմըտուքը յուսահա-
տութեան մէջ ձգեր են զինքը . ու-
զեր է որ ինքզինքը սպաննէ . զարկեր
է՛ բայց չէ կրցած մեռցընել :

Բարի պառաւը բանը իմանալուն
պէս , մարդ կանչեց ու առին տարին
զինքը հիւադանոց մը . հոն առողջացաւ
ասիկայ , բայց վրան խենթութիւն մը
եկաւ , ու խելքը բոլորովին կորսընցուց .
որ օրւան վրայ անանկ կատղեցաւ որ
պէտք եղաւ խենթանոցը տանիլ , ան-
կէց ալ բանտ : Խել մը ատեն ասանկ
չարչարուելէն ետքը , օր մը զինքը իր
կեցած տեղը մեռած գտան :

« Ասանկ ահա , սիրելիք , ըսաւ ա-
ւագերէցը , ան մարդն որ իր օրերը
հանդիստ ու երջանկութեամբ կրը-
նար անցընել , մոլութիւնները զսպած
չըլճալուն համար՝ ասանկ խեղճութեան
մէջ ընկաւ : Շատ անգամ մէկ պըղ-

տիկ ջանք մը բաւական է զմեզ շատ
փորձանքներէ ազատ պահելու . անոր
ներհակ մէկ պզտի անհողութիւն մը
անանկ փորձանքներու մէջ կը ձգէ ըզ-
մեզ , որ վերջը ուղենանք նէ ալ չենք
կրնար ազատիլ : Մորութիւններուն
հետ խաղաղութեամբ վարւիլ չըլլար .
[Ե որ մենք անոնց չկողմենք , ի-
րենք մեզի կը կողմեն ու վերանիս կը
տիրեն » :



ՏԵՄՆԵՐՈՐԳԻ ԻՐԻԿՈՒՆ

Հատախօս տղայ :

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ աղւոր քաղքընե-
րէն մէկուն մէջ բարեպաշտ կտաւա-
գործ մը կար որ իր աշխատանքովը
չափաւոր հարստութե տէր եղած էր,
ու պզտի պարտէզով մը սիրուն տուն
մը գներ էր : Ինքը արդար ու խոհեմ
մարդ ըլլալուն, ամմէնքը իրեն բան
կըյանձնէին. ասով օրէ օր կըմեծնար :

Ասիկայ երկու տղայ ունէր. կընայ-
էր որ զիրենք կըցածին չափ աղէկ
կըթէ. և ամմէն հոգ ու ջանք կընէր
որ ատենով հանդիստ ու երջանիկ
կեանք մը ունենան : Ասոր երկրորդ
որդին որ ԱՈՒՍԹաւ կըսէր, պա-
տուական ու սիրելի տղայ մըն էր. ի-
րեն խելացի ու զուարթ կերպով ալ
իր ծնողացը մեծ մխիթարութիւն ու

ուրախութիւն եղեր էր: Ասկ առջինն,
կը Ա որեն անունով՝ թեթևսողիկ տղայ
մըն էր, բերնին եկածը դուրս տալով
անդադար խօսելու հետ էր:

Հատ անդամ խրատուեցաւ, սլառ,
ժըւեցաւ ալ աս պակսութեանը հա-
մար, բայց ամենևին օգուտ մը չեղաւ:
Իր ընկերներն ալ զգուեր էին ասոր
շատխօսութենէն, կըխնտային վրան,
ըսածներուն չէին հաւտար, շատ ան-
գամ ալ կըփախչէին իրմէ, բայց իրեն
հոգը չէր ըլլար:

Գեղին դպրատան վարժապետը հի-
ւանդ ըլլալուն համար, կտաւագործը
իր երկու տղաքը իրենց գեղին մօտիկ
դպրոցը խրկեց: Հոն սկսան երկուքն
ալ սորվիլ առաջ երթալ, բայց Աուս-
թաւը բարակամիտ ու առաքինի ըլ-
լալովը՝ շատ աւելի առաջ գնաց. ա-
նանկ որ իր եղբայրն ալ սկսաւ վրան
նախանձիլ, և ուրիշ ընկերներուն
առջին իր եղբօրը վրայ գէշ խօսիլ, ա-
նունը աւրել: Արսէր անոնց թէ վար-
ժապետը անիրաւութեամբ աւելի

Առևտրաւը կըսիրէ, իմ վրաս հոգ չունի, իմ երեսս չինայիր, ասիկայ ինծի մեծ նախատինք է :

Առևտրաւը երբոր լսեց աս բանս, ասոր դէմը առաւ, խելացի կերպով ըսածին ստուծիւնը իմացուց, աս խօսքերէս երկու եղբարց կոիւր կարծես թէ քիչ մը դադրեցաւ : Տայց ասիկայ կրակ մըն էր մոխիրին տակը թաղւած, և միայն առիթ մը պէտք էր որ դուրս ելէր ու սոսկալի մնասներ ընէր : Հայրերնին երբոր աս կոիւր իմացաւ, աղէկ մը բարկացաւ Վորենին. « Թէ որ ատ չարուծենէդ ետ չի կենաս, քեզ դպրատունէն կը հանեմ » ըսաւ : Վորենը քանի մը օր ինքզինքը բռնեց, բայց շատ չանցաւ՝ նորէն իր առջի շատախօսութեան ախար ձեռք առաւ : Ան ատեն հայրն ալ զինքը դպրատունէն հանեց, քովն առաւ, սկսաւ կտաւադործութիւն սորվեցընել անոր, կըրուսար որ կամաց կամաց տարիքն առնելով աս մնասակար շատախօսութիւնն ու չարախօս ըլլալը

մէկդի կըզնէ , մարդ կըլլայ :

Հինգշաբթի օր մը կէսօրւընէ վերջը՝ հայրը կապոց մը կտաւ տըւաւ Արբենին , որ տանի իրենց քովի գեղը , ու զինը որ վաթսուն Ֆիօրինի չափ ըստակ էր՝ առնէ իրեն բերէ : Արբենը տասնըչորս տարեկան էր ան ատենը , զնաց տըւաւ կտաւը , առաւ ստակը , ելաւ ճամբայ . երբոր տուն կըրդառնար , հանդիպեցաւ մէկու մը որ իրեն ճանչցած մարդը չէր . շուտ մը սկսան մէկմէկու հետ խօսիլ . շատախօս Արբենն ալ մէկէն պատմեց թէ ուր գացեր է , ինչ ըրեր է , ուրչափ ստակ առեր է , և ուր կըտանի : Օտար մարդը պաղ կերպով մը մտիկ ըրաւ զուրցածները . մէյմընալ յանկարծ կանկատաւ կեցաւ ճամբուն վրայ , ձեացուց թէ հիւանդութիւն մը եկաւ իրեն . ուստի կաղաչեմ զիս մինակ մի թողուր ըսաւ Արբենին . անիկայ ալ նրստաւ քովը , սկսաւ իրեն սուտ իրաւ պատմութիւնները պատմել ան մարդուն՝ զինքը զբաղեցընելու համար :

Մէյ մըն ալ տեսնաս ան օտարականը
Վորենին վրայ ցաթկեց, ձեռքին մէ-
կը անոր բերնին վրայ դնելը, մէկալո-
վը ստակը ծոցէն առնելն ու փախչիլը
մէկ ըրաւ : Վորենը ասանկ փորձան-
քի հանդիպած, ինքը մինակ մնացած,
ստակը ձեռքէն ելած, չէր գիտէր թէ
տուն դառնայ նէ ինչպէս պատմէ հօ-
րը իր գլխուն եկածը. գէշն ալ ան էր որ
իրեն անխոհեմ ու բացբերան ըլլալը
պատճառ եղեր էր աս բանիս, որով
հօրը մէկ շաբթըւան վաստակը ասանկ
երկու խօսքով կորսընցուց :

Ասոնք մտածելով տրտում տխուր
նստաւ ծառի մը տակ, սկսաւ լալ ող-
բալ : Տուն երթալու երեսը չէր բռնէր.
վասն զի գիտէր թէ հօրը ձեռքէն ինչ
պիտի քաշէ, ինչեր պիտի լսէ. յան-
ցանքն ալ աչքին առջևն էր, որ հարկ
մը չեղած ատեն՝ ելեր իրեն վրան ըս-
տակ ունենալը չիճանչցած մարդուն
պատմեր էր : Վիշերը վրայ եկաւ, գեռ
ինքը ինչ ընելիքը չէր գիտէր. իրաւ
որ օդը պայծառ էր, կրրնար բացըքը-

նանալ, բայց փորն ալ անօթի էր. ան
ատեն աս ճարը մտածեց :

Ան գեղին մէջ իրենց մէկ ազգա-
կանը կար որ շատ անգամ տըներ
նին կուգար : Միտքը դրաւ Աորենը
որ անոր երթայ, պատմէ գլխուն ե-
կածը, և խնդրէ որ իրեն համար միջ-
նորդ ըլլայ՝ հօրը սիրտը առնէ : Այլա-
ճամբայ, հասաւ գեղը, գնաց զարկաւ
գուռը, բայց բացող չիկար :

Արբոր խեղճ տղան կեցեր կըստա-
սէր դրանը բացւելուն, դիպուածով
հանդիպեցաւ իրենց աւագերէցին, որ
հիւանդ մը տեսնելու գացեր ետկը-
դառնար : Հարցուց Աորենին թէ ինչ
բանունիսասատենաս տեղս՝ ձեր տնէն
ասչափ հեռու : Տղան լալով գլխուն
եկածը պատմեց : Քահանան ձեռքէն
բռնեց, եկու ետքեղ ձեր տունը տա-
նիմ ըսաւ : Աորեն առաջ չուզեց, բայց
ետքը աւագերէցին խօսքը մտիկ ըրաւ :
Հասան տուն, Աորեն չուզեց իր հօ-
րը երևնալ, ան ատենը քահանան ալ
գնաց իր կողմանէ ամմէն բան տեղն

ի տեղը պատմեց հօրը: Ատաւագործը
բանը առաջուց գիտցողի մը պէս սկսաւ
ծիծաղիլ. առաւ աւագերէցն ու Վո-
րենը տարաւ խուց մը, հոն սեղա-
նին մօտ նստեր էր մէկ մարդ մը, որ
Վորեն տեսնելուն պէս ճանչցաւ թէ
իր ձեռքէն ստակ առնող մարդն է:
Չէր գիտէր թէ արդեօք ուրախանայ
ան մարդը տեսնելուն համար, չէ նէ
շիտակ վրան երթայ՝ իր ստակը ուզէ:
Հայրը իմանալով իր տղուն շփոթիլը,
սկսաւ ամմէնուն առջևը ըսել. «Գի-
տեմ որդեակ, որ կամըչնաս կըխըպ-
նիս ըրած անխոհեմութեանդ վրայ.
չատ ուրախ եմ որ աս խելացի ու ա-
ռաքինի մարդը զքեզ աս կերպովս
խրատեց: Արչափ ատեն է որ մենք
քեզի կըսէինք, թէ լեզուիդ շափ դիր,
բերնիդ եկածը ամբողջը փեղ դուրս
մի տար. քեզի չինկած բաները մի խօ-
սիր, մեր խօսքերը անկրճիդ ջրի ձայն
կուգային: Քեզի աս օրւան քաշածիդ
պէս խրատ պէտք է եղեր որ աչքդ
բանաս ու զգուշաւոր ըլլաս: Ի՞նչ

պէտք էր որ երթաս չիճանչցած մարդու հետ բարեկամութիւն ընես. խելքիդ ինչ փչեց որ ելես պատմես թէ վրադ ստակ ունիս : Թէ որ դուն գէշ մարդու մը ձեռք ընկած ըլլայիր՝ աս ստակը հիմա կորսըւած էր : Արեւմտեան քեզի խրատ ըլլայ որդեակ, որ մէյմըն ալ չիհասկըցած մարդու սիրտ չիբանաս, մանաւանդ ճամբու մէջ. ամմէն մարդու հետ պէտք է իրաւընէ անուշութեամբ ու քաղաքավարութեամբ վարուիլ, բայց շատ զգուշալիբան է՝ սրտին գաղտնիքը ուրիշի յայտնել » :

Հայրը ասոնք ըսելու ատենը ուրիշ մարդ մը եկաւ վրայ, խօսքը կըտրեցաւ : Աորենը լալէն չէր գազրէր. մայրը մօտեցաւ տղուն քովը, սկսաւ ըսել իրեն, թէ ատ գող կարծած մարդ մեր ճանչուորն է. քեզ խրատելու համար միայն ըրաւ ատ բանը. զիտցիր որ ինքը քեզմէ հեռանալէն ետքն ալ դացեր անտառը մտեր պահւորտեր է որ տեսնայ թէ ինչ կընես. ինչւան

քահանային հետ խօսիլդ ալ տեսեր է . ու անկէջ ետքը եկաւ ամմէն բան մեզի պատմեց :

Աւագերէցն ալ քիչ մը խրատ խօսելէն ետքը՝ ելաւ բանը գնաց : Անկէջ ետե խել մը ատեն Ղորեն ինքը զինքը բռնեց , ու քիչ կըխօսէր : Բայց շատ չիգնաց , հին մոլութիւնը նորէն ձեռք առաւ . պէտք եղաւ ուրիշ փորձանքի մըն ալ հանդիպի որ աւելի աղէկ խրատուի : Ինքը դեռ կտաւագործութի սորվելու հետ էր . իսկ Առւսթաւ եղբայրը ուսման մէջ օրէ օր առաջ երթալով , քիչ ատենէն մեծ դըպրատուն մը պիտի մտնէր : Աս երկու եղբայրները միշտ մէկմէկու ծուռ աչքով կընայէին . և Ղորենը ամմէն անգամ որ եղբօրը կըհանդիպէր՝ ծանր խօսքով մը անոր սիրտը պիտի ծակէր :

Շատ անգամ պէտք կըլլար որ ասոնց հայրը երթայ քաղաքը՝ կտաւ գործելու հարկաւոր նիւթերը գնէ : Մէկ օր մըն ալ որ անիկայ աս պատճառաւ տնէն հեռացեր էր , Ղորենը

ատեն դտաւ իր եղբօրը հետ կուրտե-
լու . սկսաւ աղէկ մը սրդողիլ ու բար-
կանալ անոր : Ատեղճ Առևսթաւը առջի
բերան լուռ կեցած համբերեց . բայց
երբոր տեսաւ թէ անիկայ երթալով
կրկատղի , ձգեց փախաւ առջևէն :
Ան ատենը Ղորենը առաւ կայինը՝ ա-
սոր էտուէն նետեց . բայց Աստուած
պահեց որ տղուն չի հասաւ : Ասովալ
գոհ չեղաւ , դնաց մօրը , Առևսթաւին
դէմ չիղուրցածը չիմնաց : Մայրը նայ-
եցաւ որ հանդարտեցրնէ զինքը . ա-
ղէկ մըն ալ յանդիմանեց , ըսելով թէ
« Ատ ինչ անզգամութիւն է ըրածդ որ
ինչևան կայինը քու եղբօրդ վրայ նե-
տես » : Ղորենը ձեացուց թէ մօրը խը-
րատներէն առնուեցաւ , ու հաշտուե-
ցաւ եղբօրը հետ . բայց ելաւ դնաց
քովի դեղը , խօսք դրաւ քանի մը դա-
տարկապորտ տղոց հետ , ստակ ալ
խոստացաւ՝ թէ որ կարենան մէկ ա-
ղէկ ծեծ մը քաշել իրեն Առևսթաւ
եղբօրը : Անոնք ալ յանձն առին , ու
խօսքերնին պահեցին : Առևսթաւ երբոր


օր մը կամաց կամաց քալելով դպրոցէն
կըդառնար , ասոնք վրան վազեցին ,
ու անմեղ տղան սկսան չարաչար ծե-
ծել : Ասոր լալէն կանչւըռտելէն գեղա-
ցիները ասդիէն անդիէն վազեցին ե-
կան , Առւսթաւը խալըսեցին : Հարցու-
ցին ան անզգամներուն թէ ինչ կուզեն
խեղճ տղէն . անոնք ալ զուրցեցին թէ
Վորենը մեզի ասանկ ապսպրեց , ու
թէ որ ընելու ըլլանք նէ , ստակ ալ
խոստացաւ մեզի : Աս բանս ով որ
լսեց՝ ան շարասիրտ շատախօսին դէմ
բարկացաւ . ամառնքն ալ թշնամի դար-
ձան իրեն :

Աս միջոցիս հայրերնին երբոր տուն
դարձաւ , իմացաւ Վորենին ըրածը ,
շատ չիզարմացաւ , շուտ մը առաւ
Առւսթաւը՝ քաղքին մէջ տէրութեան
մեծ դպրոցներէն մէկը դրաւ . իսկ Վո-
րենը տասնըհինգ օր խուցի մը մէջ
գոցեց որ ոչ գուրս ելլայ , ոչ մարդու
մը հետ խօսի : Աս սլատիժը աս խայ-
տառակուլութիւնը անանկ ցաւ մը եղաւ
Վորենին սրտին որ հաստատմիտքը դը-

բաւ անկէց ետքը բոլոր հողով զգուշանալ շատխօսութեան ու նախանձութեան մոլութենէն: Աւաս բանիս համար ասանկ ճար գտաւ: Միշտ երբոր կիմանար թէ շատ խօսեցաւ, ինքն իրեն պատիժ կը դնէր, սրտին ուզած մէկ բանէն ետ կը կենար: Շատ անգամ անմեղ զուարճութիւններէն ալ հեռու կը կենար, որ ինքն իրեն յաղթելու վարժի, և ինքզինքը կը ըրէ: Քովիններուն կաղաչէր որ իր վրայ պակտութիւն մը տեսնեն նէ, համարձակ զուրցեն իրեն, որ շտկուի: Ասանկով քանի մը ամսուան մէջ անանկ կը ըրէր լեցաւ խելօքցաւ, որ ամմէնքը զարմացան, ու վրան մեծ համարմունք առին, սկսան սիրել զինքը:

ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ, Հաւատարիմ գերի	5
ՎԵՑԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ, Խոստովանանք .	26
ԵՕԹՆԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ, Սուա զուր- ցողը իր սուտերովը կրպատժըւի .	40
ՈՒԹԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ, Արհամարհոա մարդը իր պատիժը կը գանայ . .	49
ԻՆՆԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ, Պզտիկուց մոլու- թէնէ մը ետ չիկեցողին վերջը գէշ է	66
ՏԱՍՆԵՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ, Շատախօս տը- ղայ	75



50

for

for

